8 ՄԱՐՏ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 40 (4659)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

ՉԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ

## Ամերիկահայերը պահանջում են ԱՄՆ կենտրոնական բանկից

**Մի խումբ ամերիկաբնակ հայեր դատական կարգով պահանջ են ներկայացրել ԱՄՆ կենտրոնական բանկին՝ հրապարակելու Ցեղասպանության ժամանակ թուրքական իշխանությունների՝ հայերից խլած ունեցվածքի, ոսկեղենի ընդհանուր արժողության ցանկը: Ամերիկահայերի համար նման պահանջով դիմելու համար հիմք է հանդիսացել ամերիկյան օրենքը, ըստ որի՝ «ԱՄՆ կենտրոնական բանկը պարտավոր է ազատորեն տեղեկություն տալ յուրաքանչյուր պահանջի դեպքում»:**

**Ըստ նախնական տվյալների՝ միայն 1915-ին թուրքական իշխանությունները հայերից խլել են շուրջ 8 մլն 130 հազար դոլարի արժողությամբ շարժական գույք, որը որպես թուրքական ոսկի ի պահ է տրվել գերմանական Reichs բանկում: Այնուհետեւ, առաջին աշխարհամարտից հետո, համաձայն Վերսալյան պայմանագրի, այդ գումարն անցել է ԱՄՆ-ին եւ մյուս դաշնակից պետություններին: Հ. Ա.**

## Մարտի 8-ը՝ խորհելու եւ մեկ թեմա մեր պետական այրերի համար

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Հայ կնոջ վերաբերյալ դատարկ գովերգներն է՛լ չեն ուտվում: Փառաց ճառերն այլեւս ծիծաղելի են: Ճոռոմ եւ պաթետիկ ձոներգերը սովետական անցյալ են ու դրանց մասին հիշելն անգամ ծիծաղ է հարուցում: Եվ ուրեմն՝ ի՞նչ խոսենք ու լսենք այսօր: Ի՞նչ խոսենք, որ նվնվոց չլինի, արժանապատվություն չվնասի ու միաժամանակ իր մեջ ունենա ողջ ներկապնակը հայ կնոջ հոգսի ու պարտավորության, որ քիչ չէ բնավ այս մեր դժվարին օրվա մեջ: Ի՞նչ լսելն ակնկալենք, որ միաժամանակ ներառի մայր լինելու գորովը, սիրելի եւ սիրված լինելու բերկրանքը, հայ հասարակության մի հարգված մասնիկը լինելու հպարտությունը, ու միաժամանակ հոգսի ու պարտավորության բեռն ուսած՝ մեր գիծը տանենք աշխարհի բազմադեմ իգական հատվածում՝ չնվաստանանք կամ բարձր չդասենք մեզ, չափից դուրս չգենդերանանք ու չափից դուրս պահպանողական չլինենք, քանի որ մեր իրականությունն այլ է: Ներկա իրականությամբ հայ կինը մեր կյանքի բոլոր նորույթների վերին շերտերում է, նրանց դրոշակակիրը կարելի է ասել՝ իրականության հանգույն լինենք: Եվ ուրեմն՝ օն անդր առաջ, ինչպես կասեին մեր պատմական հերոսուհիները, որոնք մնացին անցյալի մեջ ու պատմիչների գրիչի ծայրին՝ Նուարդ եւ Էրատո թագուհի, Փառանձեմ ու Ասպրամ, Այծեմնիկ ու Շահանդուխտ, Սահականույշ ու Նազենի՝ անձնվեր ընկերուհուց մինչեւ սիրատոչոր սիրուհի, հայրենիքի պաշտպանից մինչեւ սիրո համար հոգին դժոխքին հանձնած ինքնասպան, մեր մանկությունը զարդարած, մեր տեսիլքները հարստացրած, բայց այսօր հեռու-հեռու, այնուամենայնիվ, մեր ֆեյսբուքյան ու թվիթերյան առօրյայից, սեքսխորհրդանիշների հիթշքերթների ու մարմնային գեղեցիկ սիլուետների ցուցադրման ժամանակից: Մեր հին սիմվոլներն ու նորերը պատերազմի մեջ են հաճախ, մեր չափանիշները սուսեր են՝ ուրիշների չափանիշներին բախվող: Կյանքի նորույթները հաճախ չմարսած՝ նետվում ենք նորերի վրա. կյանքը հեւիհեւ սլանում է առաջ՝ նրա հետեւից, կողքից, համաչափ կամ անսինքրոն, հեծած ու կամ քաշ ընկած, արժանապատվորեն կամ հաճախ ոչ այնքան՝ սլանում ենք նաեւ մենք, երբեմն հին ու նոր իրար հետ չհաշտեցրած, հաճախ ժամանակ չունենալով դասդասելու՝ հնի լավը պահելու, նորի խոտելին հեռու հրելու համար: Բայց եւ ավանդույթի համար դեռ տեղ ենք թողնում, ու լավ է, որ թողնում ենք, քանի որ մարդու բնույթն է այդպիսին՝ պահում է այն, ինչ օգնում է ապրել, առանց հետ նայելու՝ չենք կարող առաջ նայել ու տեսնել:**




Տես էջ 2

## Ո՞ր «վիճելի հարցերը» պետք է «ձգտել» խաղաղ լուծել

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանն իր մոտեցումն ու ձեռագիրը չի փոխում, իսկ ղարաբաղյան բանակցություններում նորանոր փաստաթղթեր են ստորագրվում: Դրանց տակ իր ստորագրությունն է դնում նաեւ Ադրբեջանի նախագահը, բայց ի կատարումն որեւէ մեկը չի շտապում քայլեր ձեռնարկել, ավելին, հայկական կողմի ձեռնարկած քայլերն էլ, ըստ էության, մնում են անպատասխան:

Մարտի 5-ին Սոչիում ՌԴ նախագահի հրավերով տեղի ունեցած եռակողմ՝ Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան նախագահների հանդիպումը հիմա էլ Սոչիի փաստաթղթի տեսքով դարձավ պատմություն: Այս բանակցություններում, ըստ պաշտոնական հաղորդագրությունների, քննարկման հիմնական թեման 2010-ի հոկտեմբերի 27-ին ընդունված Աստրախանի հայտարարության իրականացման ընթացքն է եղել: Իսկ Աստրախանի հայտարարությունը՝ վերնագրված «Վստահության ամրապնդման հատուկ արձանագրությունը», ամենից առաջ ընդգծում էր հրադադարի ռեժիմի ամրապնդման ու ռազմական ոլորտում փոխվստահության անհրաժեշտությունը:



Բայց փաստաթղթային ձեւակերպումներից դուրս յուրաքանչյուրը յուրովի հասկանում ու այդպես էլ աշխարհին է մատուցում անգամ սեփական ստորագրությամբ ամրագրված հասկացությունները, ինչն Ադրբեջանի պարագայում նշանակում է, թե կարելի է թղթի վրա գրել հրադադարի ամրապնդման մասին, իսկ իրականում հենց Սոչիի հանդիպումից առաջ, արդեն վատ ավանդույթի նման, կրկին սադրանքի գնալ:

Տես էջ 3

## Թեհրանից՝ Բաքու. միացյալ բանկ ստեղծելու առաջարկ եւ մի քանի ֆեթվա

Հ. ԱՓՅԱՆ

Երեկ Թեհրան ժամանեց Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: Ինչպես նշում են պաշտոնական լրահոսում՝ «Նախարար Մամեդյարովը, որը նաեւ Իրան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի ադրբեջանական կողմի ղեկավարն է, կմասնակցի Թեհրանում կայանալիք այդ հանձնաժողովի նիստին, որի առաջին նիստն անցկացվեց 2008-ի մարտին Բաքվում»: Փաստորեն 3 տարի հետո միայն հանձնաժողովը նոր նիստ գումարեց. որոշ փորձագետներ այս հանգամանքը պատճառավորում են Իրան-Ադրբեջան վերջին ժամանակներում սրված հարաբերություններով:

Թեհրանում, բացի գործընկեր Ալի Աքպեր Սալեհիի հետ հանդիպումից (վերջինս էլ իրանական կողմի ղեկավարն է Իրան-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովում- Հ. Ա.), Մամեդյարովը կհանդիպի նաեւ նախագահ Մահմուդ Ահմադինեժադին: Ինչպես տեղեկանում ենք «Թրենդ»-ից, միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում Մամեդյարովն իրանական կողմին առաջարկել է արդիականացնել սահմանային անցակետերը՝ մաքսակետերի համար սահմանելով 24-ժամյա աշխատանքային գրաֆիկ: Իր հերթին նախարար Սալեհին առաջարկել է Բաքվին՝ «ստեղծել միացյալ բանկ, բաց վարկային համակարգ եւ այլն»: Ադրբեջանական աղբյուրներից տեղեկանում ենք նաեւ, որ Բաքուն եւ Թեհրանը կստորագրեն «մի շարք համաձայնագրեր՝ տնտեսական գործակցության ոլորտում»:

Միեւնույն ժամանակ, զուգահեռաբար, շարունակվում է Իրան-Ադրբեջան «ակտիվ երկխոսությունը» հոգեւոր ոլորտում: Ինչպես արդեն տեղեկացրել ենք՝ Իրանի բարձրաստիճան հոգեւորականությունը կոշտ քննադատությամբ ընդունեց Ադրբեջանի կրթության նախարարի որոշումը, որ ադրբեջանական դպրոցներում կարգելվի հիջաբը (աղջկա մուսուլմանական գլխաշոր): Հիշեցնենք, որ ավելի վաղ՝ ադրբեջանական իշխանությունները սկսել էին երկրում որոշ մզկիթներ քանդելու գործընթաց, այդ երկրում նույնիսկ տեղի ունեցան մի քանի մոլլաների սպանություններ:

Տես էջ 2

## Հոլանդիայի խորհրդարանում ցեղասպանության ժխտումը պատժելու օրինագիծը դեռեւս չունի մեծամասնություն

Հոլանդիայի խորհրդարանի տարբեր խմբակցությունների հարցերին Քրիստոնեական միության խմբակցության պատասխաններով, որոնք հրատարակվել են մի 23-էջանոց փաստաթղթում, ցեղասպանության հասարակայնորեն եւ կանխամտածված ժխտումը պատժելու օրինագիծը նոր փուլի մեջ է մտնում:

Ըստ Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի (FAON), օրինագիծը, որ ներկայացվել է հոլանդական խորհրդարանին (Ներկայացուցիչների պալատին) 2006 թ. Քրիստոնեական միություն խմբակցության կողմից, մինչ այժմ չէր վայելում մեծամասնության աջակցությունը: Դա ակնհայտ էր գրավոր մշակման փուլի ընթացքում խորհրդարանական խմբակցությունների բազմաթիվ քննադատական հարցերից:

Բարձրացված խնդիրներից մեկը վերաբերում է այն հարցին թե արդյո՞ք նման օրինագիծ անհրաժեշտ է, նկատի ունենալով, որ հոլանդական քրեական օրենսգրքի խտրականության եւ խմբային վիրավորանքի մասին հոդվածները արդեն իսկ բավարար երաշխիքներ են նախատեսում ցեղասպանության ժխտման պատժելիության համար: Ծանրակշիռ դեր ունի նաեւ խոսքի ազատության սահմանափակումների մասին Հոլանդիայում ծավալված ներկայիս հանրային բանավեճը:

Օրինագծի հեղինակ Քրիստոնեական միություն խմբակցությունը իր հուշագրում, ի թիվս այլոց, ընդգծել է ցեղասպանության հերքման բացահայտ քրեականացման անհրաժեշտությունը՝ հիմնվելով 2008 թ. նոյեմբերի 28-ի «Պայքար ռասիզմի եւ այլատյացության որոշ ձեւերի եւ դրսեւորումների դեմ քրեական օրենքի միջոցով» ԵՄ շրջանակային որոշման բնագրի եւ նպատակադրումների վրա: Ինչ վերաբերում է խոսքի ազատությանը, պետք է ի թիվս այլոց պնդել, որ դրա պաշտպանությունը նկատի չի առնված, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (ՄԻԵԿ)՝ խմբային վիրավորանքի լուրջ խախտումների համար:

Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիան տեղեկացնում է, որ գալիք ժամանակներում հայտնի կդառնա, թե Հոլանդիայի ներկայիս քաղաքական իրավիճակում, որ ստեղծվել է 2010 թ. խորհրդարանական ընտրություններից հետո, արդյոք կլինի օրինագծին աջակցող մեծամասնություն Հոլանդիայի խորհրդարանում: Կարելի է ակնկալել, որ մինչեւ այս տարվա վերջը օրինագիծը կքննարկվի Հոլանդիայի խորհրդարանի լիագումար նիստում:

Ա. Հ.

## Մահացել է Իրանի հայազգի «Արեգակնային մայրը»

**Մարտի 5-ին Թեհրանում 90 տարեկան հասակում մահացել է աստղագետ-ֆիզիկոս, դոկտոր Ալենուշ Տերյանը: Լինելով Իրանի առաջին կին ֆիզիկոսը՝ Տերյանը, որին Իրանում անվանում են «Իրանի արեգակնային մայր», Թեհրանի պետական համալսարանի Գեոֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի ինստիտուտի հիմնադիրն է: Ալենուշ Տերյանն արժանացել է ինչպես Իրանի պաշտոնյաների, այնպես էլ Հայաստանի եւ իրանահայ համայնքի տարբեր կառույցների ու մարմինների գնահատանքին: Այս մասին տեղեկացնում է Թեհրանի հայկական «Ալիք» պարբերականը:**

Հ. Ա.

## Զբոսաշրջության ոլորտը դանդաղորեն վերականգնվում է

**Համաշխարհային տնտեսական ֆորումը մարտի 7-ին հրապարակել է «Ճամփորդություն եւ զբոսաշրջություն. մրցունակություն 2011» զեկույցը: «Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ՝ զեկույցում ներկայացված 139 երկրների շարքում Հայաստանը 90-րդ տեղում է՝ 2009 թվականի զեկույցի համեմատ արձանագրելով 1 աստիճանի առաջընթաց: Զեկույցում մեր հարեւան երկրներն հետեւյալ դիրքերում են. Վրաստանը 73-րդ տեղում է, Ադրբեջանը՝ 83-րդ, Թուրքիան՝ 50-րդ, իսկ Իրանը՝ 114-րդ տեղում: Առաջին տեղերում են Շվեյցարիան, Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրիան, Միացյալ Նահանգները, Կանադան, Սինգապուրը եւ այլն:**

**Զեկույցում նշված է, որ միջազգային տնտեսական ճգնաժամի դժվարին շրջանից հետո զբոսաշրջության ոլորտը դանդաղորեն վերականգնվում է, եւ 2010-ին ոլորտում 5-6 տոկոս աճ է արձանագրվել :**

Ի. Պ.

# «Երջանիկ կլինեմ այն ժամանակ, երբ երեխաներիս առողջ ու երջանիկ կտեսնեմ»



Միհրանյան Ալվարդին Երեւանում շատերն են ճանաչում: Սպիտակած մազերով, թախծոտ աչքերով այս կինը թերթերի կապոցը, մատյանների ու անձեռոցիկների տուփերը ձեռքին շրջում է մետրոյի գնացքներով: Մետրոյում նման մանր-մունր բաներ վաճառելով՝ տիկին Ալվարդը կարողանում է ապրուստի միջոցներ հայթայթել: Պատմում է, որ արդեն 16 տարի է մետրոյում այս գործով է զբաղված. «Տարբեր տեղերից թերթեր, գրիչներ ու անձեռոցիկներ եմ վերցնում: Վաճառելուց հետո խանութների գումարն իրենց եմ տալիս, իսկ տակն էլ ինչ մնում է, պահում եմ ինձ»: Այսպես աշխատելով տարիներ շարունակ 51-ամյա Ալվարդը պահում է սկեսրոջը, 2 տղաներին եւ իրեն: Ասում է, որ ամուսնալուծված է, նախկին ամուսինը ոչնչով չի օգնում իրենց: Տղաներից մեկը 28 տարեկան է, մյուսը՝ 21, երկուսն էլ չեն աշխատում: Փոքր տղան 2-րդ կարգի հաշմանդամ է, ոսկրային հիվանդություն ունի: «Տղաս երկու ամիս հիվանդանոցում է պառկել: Առաջ նույնիսկ քայլել չէր կարողանում, ձեռքերն ու ոտքերը դեֆորմացվել էին: Հիմա էլ անընդհատ դեղեր է խմում», պատմում է տիկին Ալվարդը, այնուհետեւ ավելացնում, որ փոքր տղան 12 հազար դրամ թոշակ է ստանում, որն ընտանիքի աղքատիկ բյուջեի մի մասն է կազմում: Մեծ տղան էլ նյարդային համակարգի խնդիրներ ունի: Տիկին Ալվարդի խոսքով՝ վատառողջ լինելու պատճառով երկու երեխաներն էլ ազատվել են զինվորական ծառայությունից: Նրանք մի կարգին տուն էլ չունեն: Ապրում են գնացքների նախկին ենթակայանում, որը Զարբախում է: Մեր երկրում ինչպես շատ կանայք, տիկին Ալվարդը նույնպես ընտանիքը պահելու ծանր հոգսը վերցրել է իր ուսերին: Լռությամբ ու համբերությամբ, առանց ամուսնու մեծացրել է երեխաներին: Եթե անգամ ոչինչ չպատմեր իր մասին, նրա տրտում դեմքից երեւում է՝ ինչ զրկանքների միջով է անցնում: «Ինձ օգնող չունեմ: Մեկ-մեկ մեծ տղաս պղինձ ու ալյումին էր հավաքում, հանձնում էր, դրանց համար փող էին տալիս, բայց հիմնականում իմ գործով ենք ապրել», պատմում է տիկին Ալվարդը, ապա ավելացնում. «Մետրոյում, սակայն, ոստիկանները միշտ չէ, որ թողնում են աշխատեմ: Օրինակ՝ 2 օր առաջ ոստիկանները տեսան, որ գնացքում բան եմ ծախում, ինձ մետրոյից դուրս հանեցին: Ուրիշ գործ չունեմ, դրա համար էլ ստիպված էստեղ եմ գալիս»: Մի կողմից երեխաների առողջությունը, մյուս կողմից սոցիալական ծանր պայմանները տիկին Ալվարդի կյանքը չարչարանքի են վերածել, սակայն նա չի հուսահատվում, կամ ինչպես ինքն է ասում. «Որ հուսահատվեցի, ի՞նչ օգուտ»: Հայ կանանց բնորոշ ծով համբերությամբ տիկին Ալվարդը կրում է կյանքի դժվարությունները ու պայքարում ընտանիքը պահելու համար: Իսկ երազանքների ու երջանկության մասին խոսելիս աչքերն արցունքով են լցվում: «Ուզում եմ, որ երեխաս առողջանա, ամուսնանա: Երջանիկ կլինեմ այն ժամանակ, երբ երեխաներիս առողջ ու երջանիկ կտեսնեմ», ասում է տիկին Ալվարդը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Զբոսաշրջային խոշոր նախագիծը անհասկանալի վերաբերմունքի է արժանանում

Մոտ 400 մլն դոլար արժողությամբ «Լճափնյա հանգստավայրեր Հայաստանում» ծրագիրն իրատեսական է եւ արժանացել է միջազգային փորձագետների բարձր գնահատականին: Այս մասին հավաստիացնում է ծրագրի նախաձեռնող **Արմեն Վարդանյանը**, որը բազմաթիվ հանդիպումներ է ունեցել Սփյուռքում եւ Հայաստանում, ներկայացրել այս ծրագրի բոլոր առավելությունները, ստացել միայն դրական արձագանքներ: Ըստ մեր զրուցակցի, կոնկրետ Հայաստանում այս ծրագրին հավանություն են տվել էկոնոմիկայի նախարարությունը, զարգացման հայկական գործակալությունը, ՀՀ նախագահին առընթեր հանրային խորհուրդը, ԱԺ նախագահը, բոլոր խմբակցությունները, գործարարներ:

Հանգամանորեն մշակված ծրագիրը ենթադրում է զբոսաշրջային համալիրի կառուցում մասնավորապես Եղվարդի ամբարի շրջակայքում: «Սիս, Մասիս եւ նոր Հայաստան» կոչվող զբոսաշրջային համալիրը պետք է ընդգրկի այցելություններ շրջակայքի հին եկեղեցիներ, անտառներ, Բյուրականի աստղադիտարան, Արա լեռան վրա կստեղծվի լեռնադահուկային բազա եւ այլն: Այսինքն, այստեղ այցելող զբոսաշրջիկները ձանձրանալու առիթ եւ ժամանակ չեն ունենա: Զբոսաշրջային համալիրում կստեղծվեն 1500-2000 աշխատատեղեր, իսկ մեր ջրերն էլ անիմաստ չեն հոսի դեպի Նախիջեւան, այլ կկուտակվեն Եղվարդի ջրամբարում: Ծրագրի եկամտաբեր լինելու եւս մեկ կողմն այն է, որ վերոնշյալ համալիրը մոտ է Երեւանին:

Արմեն Վարդանյանը տեղեկացնում է, որ այս նախագծի կառավարումը ստանձնելու պատրաստակամություն է հայտնել հանրահայտ MGM ընկերությունը: Նախագծի հեղինակի կարծիքով, այն պետք է լինի համահայկական եւ ներդրումներ ներգրավվեն ինչպես Հայաստանից, այնպես էլ Սփյուռքից:

Սակայն կառավարությունը ոչ մի կերպ չի արձագանքում այս ծրագրին: Արմեն Վարդանյանը անհասկանալի է համարում դա: Առանց որեւէ բացատրության էկոնոմիկայի նախարարության հաստատած ծրագիրը կառավարությունը հետ է ուղարկել: Ըստ նրա, բավական է, որ կառավարությունն աջակցի այս ծրագրին եւ 10-15 մլն դոլար ուղղի Եղվարդի ջրամբարի կառուցմանը, նախագիծը տեղից կշարժվի, եւ ներդնողները կսկսեն հյուրանոցներ եւ հանգստի այլ օբյեկտներ կառուցել: Հարկային արտոնություն ծրագրի նախաձեռնողը չի պահանջում, այլ միայն ցանկանում է, որ երկրի առաջին դեմքերն ուշադրության արժանացնեն այս նախագծին, որի իրագործումը շահավետ կլինի ե՛ւ իշխանությունների, ե՛ւ ժողովրդի համար: «Սպասում ենք նախագահի եւ վարչապետի դիրքորոշմանը», ասում է Արմեն Վարդանյանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Թեհրանից՝ Բաքու. միացյալ բանկ ստեղծելու առաջարկ եւ մի քանի ֆեթվա

*1-ին էջից*

Բնականաբար այս քայլերը առաջացրել են իսլամական Իրանի դժգոհությունը, եւ եթե դա այդքան էլ չի արտացոլվում Թեհրանի «աշխարհիկ» քաղաքականությամբ, ապա Իրանի հոգեւոր վերնախավն իր հայտարարություններում խիստ է: Այսպես՝ օրերս Իրանում գումարվել է «Հիջաբի արգելումն Ադրբեջանում» թեմայով նիստ, որտեղ ելույթ է ունեցել իրանցի բարձրաստիճան հոգեւորական այաթոլլահ Հաշեմ Զադե Հարիսին. «Ադրբեջանի ղեկավարությունը պետք է զգուշավորություն ցուցաբերի, որ իսլամական հոգեւոր դասը ստիպված չլինի բնութագրել նրանց որպես ուրացողների», հայտարարել է մահմեդական հոգեւորականը: Ավելի վաղ՝ իրանցի մեկ այլ հոգեւորական՝ այաթոլլահ Մաքարեմ Շիրազին ֆեթվա (մահմեդական կրոնական հրաման, փաստաթուղթ) էր արձակել, որտեղ Ադրբեջանի կրթության նախարարը մեղադրվում է սահմանադրություն խախտելու, բազմաթիվ մարդկանց դժգոհություն պատճառելու մեջ: Ավելին՝ անցյալ տարվա մայիսին նույն հոգեւորականը մեկ այլ ֆեթվա արձակեց, որտեղ մասնավորապես գրված էր. «Հստակ հայտարարում ենք, եթե Ադրբեջանում շարունակվի մզկիթների քանդման գործընթացը, մենք պայքարի հրաման կարձակենք, եւ նա, ով պայքարի ընթացքում կզոհվի, շահիդ կդառնա: Ադրբեջանի իշխանությունները պետք է հասկանան, որ նման հրաման արձակելու պարագայում իրավիճակն իրենց երկրում կտրուկ կսրվի, քանի որ շիաները յուրաքանչյուր նման հրաման արձակելուն պես պատրաստ են այն կատարելու»: Սա դեռ բավական չէ՝ իրանցի մեկ այլ հոգեւորական՝ Զեյն-օլ Աբեդին Ղորբանին, դիմելով Իլհամ Ալիեւին, հայտարարեց. «Ես Ձեզ վերջնագիր եմ ներկայացնում, այնպես մի արեք, որ Մուհհամմադ Ռզա շահի եւ Սադամ Հուսեյնի նման պատմության աղբարկղն ընկնեք»:

ՁԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԴԻՆ

# Մարտի 8-ը՝ խորհելու եւս մեկ թեմա մեր պետական այրերի համար

*1-ին էջից*

**Տարբեր դարերի մեր սիմվոլ կանայք չգիտեին Մարտի 8-ի մասին, չնայած մինչեւ այդպիսի տոն առանձնացնելն էլ նրանք ամեն օր պետք է մտածեին կանացի ու ցանկալի լինելու, հայ կնոջ կերպարի մեջ մնալու մասին՝ բարեկիրթ, առաքինի, հայեցի: Մեր բանաստեղծները գովերգում էին մեր շուշաններին, մեր զահրաներն ու սիրանույշները ընդօրինակման ու ներշնչանքի աղբյուր էին դառնում, մեր հերոսները կռվի գնալուց առաջ ըմպում էին սիրո հավերժական գավաթից եւ հանուն դրա մարտ տալիս: Մարտի 8 չկար, կար Անահիտ աստվածուհին, Աստղիկ դիցուհու տոն, կար քրիստոնեական մայրության օր, որը արդեն մի քանի տարի հայերս վերականգնեցինք: Իսկ Մարտի 8-ը հորինեցին 100 տարի առաջ. ինչ որ հեղափոխական խենթ կին (կարեւոր չէ սովետի հանգույն նրա անունը հոլովելը) հորինեց մի ամսաթիվ, որից արդեն 100 տարի կառչում են աշխարհի կանայք՝ այդ մի օրն առանձնացնելով որպես իրենց քմահաճույքների կատարման օր, որպես խենթ գաղափարների, աշխարհում հայտնի նորարարություններին ու թարմ հոսանքներին տրվելու օր, որպես մեծարվելու ու բացառիկացվելու պահանջմունքի դրսեւորում: Զարմանաք, որ ասեմ՝ Մարտի 8-ը հորինվել է որպես Ֆեյսբուքի նախատիպ՝ մի ամսաթիվ, որն աշխարհի մարդկանց միտքը միաժամանակ, նույն ժամանակային կտրվածքով պտտեցնում էր նույն մտքի շուրջը: Ու էստեղ էլ մի տեսակ հայերիս բախտը չբերեց: Աշխարհի կանայք մեկ օր են ունեն՝ խենթանալու ու խենթացնելու, հայերինս մեկամսյակ է. տոնը զրոյացնելու ավելի լավ ձեւ ոչ ոք չէր կարող այդքան լավ մտածել, քան հայ տղամարդիկ: Մեկամսյակն, ի վերջո, ոչինչ չի պարտավորեցնում, 30 օր ունես՝ սերդ ու նվիրվածությունդ արտահայտելու համար, էսօր չէ՝ վաղը կհայտնես, վաղը չէ՝ մյուս օրը: Փրկություն է իսկական՝ փող չկա, ցանկություն չկա՝ մեկամսյակն ինչո՞վ փրկություն չէ: Դե, մերը պետք է չափազանց լինի, հայի չափը չափազանցն է՝ իբր մեկ օրը քիչ ու քիչ է մեր տղամարդկանց անսահման սերը ցուցանելու համար, մեկամսյակ է պետք՝ զգացմունքների աճուրդի, նվիրատվությունների ցուցադրական շքահանդեսի, հայ կնոջ հանդեպ անսահման գնահատանք դրսեւորելու համար... Թեեւ՝ նորմալ, բարձր ինքնագնահատական ունեցող կնոջ համար իր ծննդյան, ամուսնության, զավակի, թոռան ծննդյան օրն էլ բավական է՝ հիշվելու ու գնահատված լինելու, իսկ մեկամսյակ-տոնի գոյությունը զիջողության նման մի բան է դառնում, մեկ ամիս շարունակ հիշեցնում տղամարդկանց կողմից, որ թույլ սեռի ներկայացուցիչ է ինքը... Մի խոսքով՝ մի տեսակ հակագենդերային մի բան կա հայոց մեկամսյակի մեջ, որ համ լավ է, համ վատ: Լավ է, քանի որ գենդերային բառը շատերիս մեջ արթնացնում է գրանտ լվացող արտոնյալ խավի երեւույթը միայն, Մարտի 8-ն էլ դրա նյութականացման ձեւերից մեկն է եւ ուրիշ ոչ մի գենդերային զգացողություն: Լավ է, քանի որ, այնուամենայնիվ, հայերս այդ մեկ ամսվա մեջ փորձում ենք տոն սարքել մեր պատկերով եւ նմանությամբ՝ եւ մեր լավ կողմերն ենք դրսեւորում, եւ վատ, հուսով եմ՝ հանրագումարում լավը շատ է լինում: Ու մեկ էլ բոլորին պատում է նվեր գնելու այս անկապ մրցավազքը, որ սպառնում է սիմվոլիկա լինելուց վերածվել նյութականի աստծուն մատուցվող զոհաբերության՝ «Ո՞վ ավելի» վերտառությամբ: Կարծես ավելի շատ տղամարդն ուզում է իր «եսը» կարեւորել նվերի թանկարժեքությամբ, եւ թե ինչ տղամարդ է ու ինչպիսի՞ նվեր կարող է գնել, քան թե կնոջը մեծարելու, նրա արժանիքներն ու նրա թանկագինությունն ընդգծելու ձեւ: Բա ի՞նչ անեն այդ բոլորը տեսնող- սահմանափակ հնարավորությունների մեր տղամարդիկ: Այդ իմաստով շատ կուզեինք, որ Մարտի 8-ն, այնուամենայնիվ, չկորցներ խորհրդանշականությունը ու ծառայեր կանանց գեղեցկությունն, անկրկնելիությունն ու անփոխարինելիությունն ընդգծող ժեստի՝ մարդկության մյուս կեսի կողմից. «Ահավասիկ կաս, գեղեցիկ, մերձավոր իմ...»: Բայց եւ թող լինի Մարտի 8-ը խորհելու եւս մեկ թեմա հայ տղամարդկանց համար՝ հայ կնոջ անվերջ համբերատարության, հնարամտության, ոչինչից ամեն ինչ ստեղծելու ունակության մասին: Հատկապես մեր երկրի քաղաքական եւ տնտեսական ընթացքի համար պատասխանատու մարդկանց համար, շնորհավորանքի հերթապահ խոսքեր ասելու առիթ դառնալուց բացի՝ մարտի 8-ից ապրիլի 7 ժամանակը թող դառնա երեսծեծանք, մտորելու նյութ՝ ինչպե՞ս թեթեւացնել հայ կանանց, հայ մայրերի օրը, ինչպես օրվա կարիքը հոգալու նրանց ջանքը թույլ չտալ, որ տանջանքի վերածվի, ինչպես օգնել նրան՝ իրենց ջանքը վարձատրված տեսնելու համար: Ու մեր առաջարկը թող ոչ թե ինչ-որ ժպիտ շարժի, այլ հասարակական կյանքի պատասխանատու մեր այրերի մեջ առավել ուժի պատասխանատվության զգացումը, ամեն բարձրաձայն խոսքն ասելուց առաջ՝ տասն անգամ մտածելու սովորույթը ուժի, որպեսզի հերթական մարտի 8-ից մինչեւ ապրիլի 7 հայ կինը սարկազմով չմտածի տոնի խորհրդի մասին:**



«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Նույն ընտանիքի երեք երեխաներին պետք է տեղավորել նույն մանկատանը

Շիրակի մարզի Ղարիբջանյան գյուղի բնակիչ Սեյրան Հարությունյանի 3 երեխաներին «իր կամքին հակառակ», մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպան Լուսինե Գինոսյանի միջնորդությամբ մանկատուն տեղափոխելու դեպքի մասին Շիրակի մարզում գործող հեռուստաընկերությունների, մի շարք էլեկտրոնային թերթերի հաղորդումները, զետեղված նաեւ մեր` www.shirak-centre.org կայքում, հանրության վրդովմունքին արժանացան:

ԶԼՄ-ների լուսաբանումներում նշվում էր, որ երեխաներին տարել են առանց ծնողների կամքը հարցնելու` այն պատճառաբանությամբ, որ ընտանիքը զուրկ է սոցիալական պայմաններից, իսկ երեխաների հայրը մինչեւ օրս, թակելով հեռուստաընկերությունների եւ իշխանությունների դռները, պահանջում է իր երեխաներին, պատճառաբանելով, որ ինքն ունի աշխատանք եւ կարող է նրանց համար հոգ տանել: Եվ քանի որ Շիրակի մարզպետարանի պաշտոնյաներն ու լրագրողներն այդ դեպքի մասին տալիս էին իրարամերժ տեղեկատվություն, մենք որոշեցինք ինքներս ուսումնասիրություն կատարել` այցելելով ինչպես տվյալ ընտանիքի բնակավայր, այնպես էլ երեխաներին հյուրընկալած մանկատներ եւ տեղում ծանոթանալ այդ ցավալի պատմության մանրամասներին: Մեր` «Շիրակ կենտրոնի» աշխատակիցները կատարեցին նաեւ լուսանկարահանումներ եւ տեսաձայնագրություններ:







Առաջինն այցելեցինք Ղարիբջանյան գյուղի բնակիչ Սեյրան Հարությունյանին պատկանող հայրական տուն, որտեղից էլ ոստիկանության աշխատակիցների ուղեկցությամբ երեխաներին տեղափոխել էին Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան գիշերօթիկ: Այնուհետեւ, մի քանի օր անց երեխաներից փոքրին` 4-ամյա Հարությունին տեղափոխել են մեկ այլ` «Թռչունյան տուն» մանկատուն-կրթարան:

Համագյուղացիների եւ մանկատների տնօրենների պնդմամբ, երեխաները մինչեւ մանկատուն տեղափոխվելը եղել են անխնամ վիճակում եւ նույնիսկ ծննդյան վկայականներ չեն ունեցել, ինչի պատճառով նրանցից երկուսը` 9-ամյա Ռոմանը եւ 6-ամյա Սուսաննան թեեւ դպրոցահասակ էին, սակայն դպրոց չեն հաճախել: Նրանց ընտանիքը երեխաների փաստաթղթերի բացակայության պատճառով չի օգտվել անգամ սոցիալական նպաստից: Երբ մենք այցելեցինք Ղարիբջանյան գյուղ, գյուղապետարանի շենքում հավաքված համագյուղացիների եւ գյուղի հաշվապահի հետ մեր ունեցած զրույցում մեր այն հարցին, թե արդյո՞ք չէիք կարող օգնել, որ երեխաներին ծննդյան վկայականներ տրվեին, որ նրանք կարողանային նպաստ ստանալ, կամ մի՞թե դժվար էր մի քիչ օգնելը այդ ծայրահեղ ծանր պայմաններում հայտնված ընտանիքին, նրանք պատասխանեցին, որ շատ են փորձել, սակայն երեխաների ծննդյան մասին տեղեկանքների բացակայության պատճառով հնարավոր չի եղել նրանց փաստաթղթերի հարցով օգնել: Համագյուղացիները արդարացի էին համարում երեխաներին մանկատուն տեղափոխելու քայլը. «Նրանց կյանքն են փրկել...», նշում էին նրանք` նկարագրելով եւ բողոքելով, թե նրանց տունը մշտապես թափթփված է եղել, եւ երեխաները մատնված են եղել անուշադրության: Ավելին, գյուղացիները մեզ առաջարկում էին իշխանությունների առաջ հարց հարուցել, որ ծնողներին եւ հատկապես մորը բուժզննում անցկացնեն եւ անհրաժեշտության դեպքում անվճար բուժման հնարավորություն տրամադրեն:

Այնուհետեւ մենք այցելեցինք «Թռչունյան տուն» մանկատուն-կրթարան, որտեղ գտնվում է այդ ընտանիքի փոքր տղան, որտեղ եւ երկար զրույց ունեցանք տնօրեն Սոնյա Սիմոնյանի հետ, տեսանք երեխային եւ ծանոթացանք մանկատան պայմաններին:

Մեր սփյուռքահայ բարերարների կողմից հովանավորվող հաստատությունում իրոք լավագույն պայմաններն էր ստեղծված երեխաների համար: Սոնյա Սիմոնյանը մեզ պատմեց, որ երեխան անցած տարի սեպտեմբերին, երբ բերվել է իրենց մոտ, երկար ժամանակ չի խոսել, այնուհետեւ կամաց-կամաց սկսել է խոսել եւ շփվել մյուս երեխաների հետ: Նույնիսկ Ամանորի տոնակատարության ոտանավոր է հասցրել սովորել, սակայն հայրը դեկտեմբերի 27-ին տոնական օրերին 10-15 օրով տարել է երեխային, բայց խախտելով պայմանավորվածությունը, նշված ժամկետում հետ չի բերել: Հաստատության տնօրենի խոսքերով` իրենք երկար են փնտրել, նույնիսկ այցելել են նրանց տունը, սակայն տան դուռը փակ է եղել եւ գյուղում որեւէ մեկը տեղյակ չի եղել նրանց գտնվելու վայրի մասին: Ընթացիկ տարվա փետրվար ամսվա վերջին տնօրենը ստացել է անանուն հեռախոսազանգ, որով հայտնել են երեխայի եւ ծնողների գտնվելու վայրի մասին, ինչպես նաեւ խնդրել են հասնել եւ փրկել երեխային:

Նրանք երեխային գտել եւ վերադարձել են Ամասիա գյուղի մոտ մի ինչ-որ անասնագոմից, որտեղ ներկայումս ապրում եւ աշխատում են ծնողները: Երեխան եղել է կրկին անխնամ վիճակում: Ս. Սիմոնյանը մեզ ցույց տվեց այդ պահին իրենց կողմից արված լուսանկարները: Մանկատանը մենք տեսանք նաեւ փոքրիկ Հարությունին, նա կրկին չէր խոսում, սակայն իրոք նրա արտաքինից երեւում էր, որ գտնվում է հոգատար ձեռքերում:

Մեզ հետաքրքրում էր մեկ այլ հարց եւս, մի՞թե հնարավոր չէր երեխաներին չբաժանել մեկմեկուց եւ երեքին միասին պահել նույն մանկատանը, որովհետեւ արդեն իսկ ակնհայտ էր, որ այդ իրավիճակում գուցե եւ ժամանակավոր, սակայն միակ ճիշտ լուծումը երեխաներին մանկատուն տեղափոխելն էր: Մեր այդ կարծիքին էր նաեւ Տիկին Ս. Սիմոնյանն ու պատրաստակամություն հայտնեց ընդունելու նաեւ նույն ընտանիքի մյուս երկու երեխաներին:

Այնուհետեւ մենք այցելեցինք Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան գիշերօթիկ, որտեղ երեխաների տեղափոխման մասին մանրամասն զրուցեցինք հաստատության տնօրեն Անահիտ Կարապետյանի հետ: Նրանց ջանքերով եւ մեծ դժվարություններով երեխաներն արդեն իսկ ունեն ծննդյան վկայականներ: Տիկին Կարապետյանը, պատմելով այդ դեպքի բոլոր մանրամասնությունները, նշեց, որ երեխաներին հիմնականում այցելում է հայրը: Թեեւ հայրը` Սեյրան Հարությունյանը մինչեւ օրս տեղական հեռուստաընկերությունների միջոցով պահանջում է իր երեխաներին, ավելին, բողոքում է ասելով. «ինչ իրավունքով են երեխաներիս մանկատուն տեղափոխել, այն դեպքում, երբ նույնիսկ տանը չեմ եղել», սակայն տնօրենը մեզ ցույց տվեց երեխաների հոր դիմումը եւ նրանց մանկատուն ընդունելու մասին ակտը, որոնց տակ կար նաեւ վերջինիս ստորագրությունը:

Ի դեպ, այս գիշերօթիկի տնօրենը եւս դեմ չէր երեխաներին միասին նույն հաստատությունում պահելուն, սակայն նշեց, որ առանձնացնելը եղել է հոր խնդրանքով, քանի որ այս հիմնարկությունն, ի տարբերություն «Թռչունյան տուն» մանկատուն-կրթարանի, ընդունում է միայն դպրոցահասակ երեխաների, դրա համար հայրը ցանկացել է, որ մինչեւ մյուս փոքրիկի երկու տարով մեծանալը երեխաներն ապրեն առանձին:

... Ինչեւիցե, կարծում ենք` պետք է շուտափույթ կերպով լուծում տալ այս խնդրին եւ մինչեւ այդ ընտանիքի սոցիալական վիճակի մի փոքր բարելավումը կամ գոնե կիսախարխուլ տան նորոգումը երեխաներին հրատապ կերպով տեղավորել նույն մանկատանը: Անշուշտ, լավագույն տարբերակը «Թռչունյան տուն»-ն է, իսկ մարզային իշխանությունները պետք է սոցիալապես ծայրահեղ ծանր պայմաններում ապրող այս ընտանիքի մորն ապահովեն անվճար բուժզննմամբ, անհրաժեշտության դեպքում` նաեւ բուժմամբ:

«Շիրակ կենտրոն» ՀԿ
Գյումրի




# Ո՞ր «վիճելի հարցերը» պետք է «ձգտել» խաղաղ լուծել

*1-ին էջից*

«**Ազգը**» տեղեկացրել է, որ մարտի 4-ին, ժամը 14:30-ի սահմաններում ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան (Վերին Չայլու. հիշեցնենք, որ մի քանի անգամ է արդեն, ինչ ադրբեջանական կողմն այս տարածքում է գնում սադրանքների - Ա.Հ.) ուղղությամբ Ադրբեջանի կողմից խախտվել էր հրադադարն ու դրա հետեւանքով զոհվել է հայ զինվոր: Եվ սա այն դեպքում, երբ հաջորդ օրը նախատեսված էր Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը Սոչիում` շարունակելու բանակցությունները:

Ադրբեջանցի դիպուկահարի կրակոցով ԼՂՀ պաշտպանության բանակի զինվորի սպանության առնչությամբ Հայաստանի արտգործնախարարությունը հայտարարեց, որ Սոչիում կայանալիք հերթական հանդիպման նախաշեմին, «միջազգային հանրության, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների դիպուկահարներին շփման գծից դուրս բերելու վերաբերյալ շարունակական կոչերին համաձայնելու եւ իրագործելու փոխարեն, Ադրբեջանը գնում է հերթական սադրանքին` փորձելով լարել մթնոլորտը նախագահական հանդիպումից առաջ»: Ընդ որում, ըստ ՀՀ ԱԳՆ-ի, Ադրբեջանի այս պահվածքը պետք է արժանի արձագանք ստանա միջազգային հանրության կողմից:

Միջազգային հանրության արձագանքների առումով իրավիճակը պարզից էլ պարզ է, քանի որ այդպիսիք ուղղակի բացառիկ են, էլ չասած, որ հենց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները որեւէ պարագայում չեն փորձում Ադրբեջանին հստակ հաղորդագրություն հասցեագրել, այլ բավարարվում են երկու կողմերին ուղղվող կոչերով, ինչը, թեեւ, ունի իր բացատրությունը, սակայն յուրաքանչյուր բանակցային հանդիպմանը հաջորդող կամ նախորդող սադրանքների կրկնության պարագայում չի կարող արդարացնել «միջազգային» որակվող հանրության անարձագանք կեցվածքը:

Այդուհանդերձ, դեռեւս Աստրախանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները, ըստ հայտարարության, պայմանավորվել էին իրականացնել ռազմագերիների եւ զոհվածների դիակների փոխանակում` ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ Միջազգային կարմիր խաչի միջնորդությամբ: Քանի որ այս ուղղությամբ էլ Ադրբեջանն առանձնակի առաջ չի գնում, Սոչիում երեք երկրների նախագահները, որպես առաջին են ամրագրել «ամենակարճ ժամկետում ավարտել ռազմագերիների փոխանակումը»: Նոր համատեղ հայտարարությամբ որպես 2-րդ դրույթ նշվում է. «Ձգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով եւ կրակի դադարեցման գծի երկայնքով կողմերի մասնակցությամբ անցկացնել հնարավոր միջադեպերի հետաքննություն` ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո եւ ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցչի աջակցությամբ»:

Նախ, բարդ է ասել, թե ինչ է նշանակում ամենակարճ ժամկետը, քանի որ Աստրախանի հայտարարությունից քիչ ժամանակ չի անցել, գրեթե 5 ամիս, որի ընթացքում ռազմագերիների փոխանակման հարցում անելիքները առանձնակի չեն պակասել: Իսկ թե այդ հինգ ամիսը «ամենակարճ ժամկետ» էր, թե ոչ` կարիք ունի պարզաբանման:

Մյուս կողմից, Սոչիի հայտարարության երկրորդ կետում ներկայացված ձեւակերպումները, որեւէ բան պարզեցնելու փոխարեն, նոր հարցեր են առաջացնում: Մասնավորապես, հստակ չէ, թե ինչ է նշանակում «բոլոր վիճելի հարցեր» ասվածքը: Արդյո՞ք ղարաբաղյան հակամարտության համատեքստում կողմերի միջեւ առկա հարցերին է սա վերաբերում` չվերաբերելով հենց հակամարտությանը:

Ամեն դեպքում, եթե դա վերաբերում է ղարաբաղյան հակամարտությանը (ինչն, ամեն դեպքում, այնքան էլ չի տեղավորվում այդ արտահայտության տրամաբանության մեջ), ապա այդ դեպքում այնքան էլ հուսադրող չէ, որ դրա կողքին օգտագործվել է «ձգտել» բառը, այսինքն` «ձգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով»: Թերեւս տվյալ դեպքում «բոլոր վիճելի հարցեր» ասվածը առնչվում է այլ խնդիրների, որոնց դեպքում եւս խաղաղ միջոցներով լուծելուն այլընտրանքի բացակայությունն ավելի տեղին կլիներ, քան ձգտումն այդպիսի լուծումներին:

Սրա կողքին, գաղափարը, ապա նաեւ ձեւակերպումը` «կրակի դադարեցման գծի երկայնքով կողմերի մասնակցությամբ անցկացնել հնարավոր միջադեպերի հետաքննություն», կարող է դառնալ հնարավորություն` դադարեցնելու ադրբեջանական սադրանքները: Այս դեպքում էլ հատկանշական է, որ այս ամենն իրագործելի է համարվում «կողմերի մասնակցությամբ», որն արդեն հանդիպել է որպես ձաեւկերպում նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարություններում, այսինքն` նկատի է առնվում նաեւ Լեռնային Ղարաբաղը: Ու թերեւս այլ կերպ հնարավոր էլ չէր լինի, քանի որ հետաքննություն չի կարող անցկացվել առանց ղարաբաղյան կողմի մասնակցության, ինչն անհրաժեշտ է նաեւ ռազմագերիների փոխանակումն իրականացնելու դեպքում:

*«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի 2010 թ. դեկտեմբերի 11-ի համարում տպագրված* ***Սոնա Ավագյանի*** *հետազոտական բնույթի հոդվածը՝ Ավստրալիայում բնակվող ուսուցչուհի Նադիա Ռայթի մասին, հետաքրքրական փաստեր է պարունակում Սինգապուրի փոքրիկ հայ համայնքից: Ուստի նպատակահարմար ենք համարում թարգմանաբար ներկայացնել այդ տվյալները «****Ազգ****»-ի ընթերցողներին:*

# Սինգապուրի սրբազան արժեքներից չորսը հայկական ծագում ունեն

*Նադիա Ռայթի բացահայտումները*

## Աշխարհագրական տեղեկանք

Սինգապուրի Հանրապետությունը գտնվում է Հարավարեւելյան Ասիայում, Մալակկա թերակղզու հարավային ծայրի մոտ, Սինգապուր կղզու եւ հարակից փոքր կղզիների վրա: Բրիտանական հասարակապետության անդամ է: Մայրաքաղաքը՝ Սինգապուր: 1819-ին կղզին անցել է անգլիական Արեւելահնդկական ընկերությանը, 1826-ին՝ մտել է անգլիական Սթրեյթս Սեթըլմենտս գաղութի կազմի մեջ: ՄԱԿ-ի անդամ է 1965 թվից: Հայերը Սինգապուրում հաստատվել են 18-րդ դ. վերջին: Եկել են հիմնականում Հնդկաստանից եւ Մալակկայից:

Մալայզիան պետություն է Հարավարեւելյան Ասիայում, Մալակկա թերակղզու հարավ եւ Կալիմանտան կղզու հյուսիսային մասերում: Հարավչինական ծովով բաժանված է երկու՝ Արեւմտյան Մալայզիա (Մալայա) եւ Արեւելյան Մալայզիա (Սարավակ եւ Սաբահ) մասերի: Մտնում է ազգերի Բրիտանական համագործակցության մեջ: Սահմանակից է Թաիլանդին, Ինդոնեզիային: Մայրաքաղաքը՝ Կուալա Լումպուր: Մալայզիան սահմանադրական միապետություն է, նահանգների ֆեդերացիա:

Սինգապուրում եւ Մալայզիայում հայերի պատմությունը ուսումնասիրող, Ավստրալիայում բնակվող, մասնագիտությամբ ուսուցչուհի **Նադիա Ռայթի** տվյալներով, Սինգապուրում հայերի թիվը երբեք չի գերազանցել 100-ը, եւ 1820-ից 2002 թվականը ընկած ժամանակահատվածում այնտեղ ապրող հայերի թիվը եղել է ընդհանուր 656-ը, որից մոտ 184-ն է Սինգապուրում ապրել ավելի քան 25 տարի, եւ 12 ընտանիք միայն այնտեղ թոռներ է ունեցել: (1)

«Հին սերնդից վերջին հայը վախճանվեց 2009-ին: Այժմ էլ 40-ից պակաս հայեր են ապրում այնտեղ: Հայաստանից Սինգապուր տեղափոխված առաջին հայը մի բժիշկ էր, որն իր ընտանիքի հետ 2002-ին մի տարի այնտեղ ապրելուց հետո վերադարձավ Երեւան: Մալայզիայում պատկերը գրեթե նույնն է», պատմում է Ռայթը, որը ներկայումս Մելբուռնի համալսարանում պատրաստվում է դոկտորական թեզ պաշտպանել պատմության գծով:

Ռայթը ծնվել է Նոր Զելանդիայում: Մայրը հայ է եղել, անունը՝ Վարսենիկ Դոքմեջյան: Հայրը՝ Ջեկ Մեյլքը, նորզելանդացի է, որը Վարսենիկին հանդիպել է Եգիպտոսում: Վարսենիկի ծնողները ցեղասպանության տարիներին Ամասիայից (Թուրքիա) տեղափոխվել են Եգիպտոս եւ հաստատվել Ալեքսանդրիայում:

«Նրանից ես ժառանգել եմ հայկական արմատներս, բայց քանի որ Նոր Զելանդիայում քիչ հայեր կան, ես հայերեն չեմ կարողացել սովորել: Գիտեմ ընդամենը մի քանի բառ: Բայց մորիցս լսելով անցյալ դարասկզբին կատարվածի մասին, ես միշտ հետաքրքրվել եմ հայերով: Առաջին հային (մորիցս բացի) հանդիպել եմ 16 տարեկանում, երբ Ֆրանսիայից մոտակա քաղաք էր այցելել մեկը, որին մայրս փութաջանորեն հրավիրեց մեր տուն: Հայաստան կուզենայի այցելել, բայց Ամասիան ինձ ավելի է գրավում», պատմում է Ռայթը:

Սինգապուրում հայերի գոյության պատմությամբ սկսել է հետաքրքրվել 1985-ից, երբ նրա ամուսնուն այնտեղ պաշտոն են առաջարկել, եւ քանի որ Սինգապուրի հետ առաջին կապ հաստատողները Մալակկայի եւ Պինանգի (Մալայզիայի նահանգներ) առեւտրականներ են եղել, իր ուսումնասիրությունները նաեւ կատարել է Մալայզիայում:

Հայերը Սինգապուրում հաստատվել են նախքան 1915-ի Եղեռնը՝ մեծ մասամբ գալով Պարսկաստանից, Հնդկաստանից եւ Ճավայից: Հայկական համայնքի առկայությունը նպաստել է, որ տեղական մամուլը բավական մանրամասնություններով անդրադառնա 1890-ական եւ հետագայում 1909-ի եւ 1915-ի ողբերգական իրադարձություններին:

Այդ ժամանակ բրիտանական գաղութներ Մալակկա եւ Պինանգ քաղաքներում հայերը ինտեգրվել են տեղի եվրոպական համայնքներին, եւ օտար ազգերի ներկայացուցիչների հետ ամուսնությունները տարածված են եղել: 1960-ականներին մոտ 60 հայեր կամ մասամբ հայեր ապրել են Սինգապուրում: «Զրուցել եմ մարդկանց հետ, որոնք միակողմանի (մոր կամ հոր կողմից) հայկական արմատներ են ունեցել: Բայց այսօրվա երիտասարդ սինգապուրցիները ոչինչ չգիտեն հայերի կամ Հայաստանի մասին: Փոքրամասնության ջանքերով փորձ է արվում վերակենդանացնելու հետաքրքրությունը հայկական արմատների որոնման աշխատանքներում», ասում է Ռայթը, որը հեղինակ է թերթերում եւ ամսագրերում տպագրված մի շարք հոդվածների, ինչպես նաեւ համահեղինակը «Վանդա միսս Ջոակիմ: Սինգապուրի ազգային ծաղիկը եւ Ագնեսի ու Ռիդլիի ժառանգությունը» գրքի: 2003-ին լույս ընծայված «Հարգարժան քաղաքացիներ: Հայերի պատմությունը Սինգապուրում եւ Մալայզիայում» հատորում նա խոսում է այն մասին, որ Սինգապուրի սրբազան արժեքներից չորսն ունեն հայկական ծագում:

## Սինգապուրյան խոլորձը՝ վանդան

Աշխարհում վանդայի (սինգապուրյան խոլորձ) առաջին հիբրիդի մշակումը կատարել է Աշխեն Հովակիմյանը կամ, անգլերեն տարբերակով, Ագնես Ջոակիմը (Իոակիմ) 1880-ական թվերին: Աշխենը ծնվել է Սինգապուրում 1854 թվին: Ծաղիկը, որը նրա անունով կոչել են «վանդա միսս Ջոակիմ» կամ «սինգապուրյան խոլորձ», մեծ ժողովրդականություն է վայելել Սինգապուրից բացի նաեւ Ֆիլիպիններում եւ Հավայան կղզիներում, այնուհետեւ նաեւ արտահանվել է Եվրոպա, եւ մրցանակներ շահել: 1899-ին կայացած «Ծաղկի տոնահանդեսում» Աշխեն Հովակիմյանի խոլորձը առաջին մրցանակի է արժանացել որպես «ամենահազվագյուտ խոլորձ»: Իր հաջողության համար Աշխենը նույնպես գովասանական խոսքերի է արժանացել, բայց անողոք հիվանդության՝ քաղցկեղի հետեւանքով նրա կյանքի թելը վաղաժամ ընդհատվել է երեք ամիս անց: 1947-ին երկրի նորաստեղծ «Առաջադիմական» կուսակցությունը վանդան ընտրել է որպես իր խորհրդանիշը, իսկ ավելի ուշ՝ 1981-ին Աշխենի խոլորձը ներկայացված 40 այլ ծաղիկների թվում ընտրվել է որպես «Սինգապուրի ազգային ծաղիկ»: Ռայթն իր գրքում գրում է, որ Աշխենն աշխարհում առաջին կինն է, որ խոլորձի հիբրիդ է մշակել-աճեցրել:

## «Ռեֆլզ» հյուրանոցը

Սպահանից (Իրան) Սինգապուր տեղափոխված Մարհին, Տիգրան, Ավետ եւ Արշակ-Սարգիս եղբայրները ամենահայտնի հյուրանոցի տերերն են եղել արեւելքում: Մոտ 50 տարի շարունակ Պինանգում կառուցած նրանց հյուրանոցները՝ «Արեւելյան» (Eastern), «Օրիենտալ» (Oriental) եւ «Քրեգ» անվանումներով առաջատար դիրք են զբաղեցրել Սթրեյթս Սեթըլմենտսի ամբողջ տարածքում: Ռանգունում (Մյանմարի խոշորագույն քաղաքը) «Ստրենդ հոթելը» նույնպես նրանց է պատկանում: Իսկ Սինգապուրում բարձրացված իրենց հյուրանոցը եղբայրները կոչել են Սինգապուրի հիմնադիր Ստեմֆորդ Ռեֆլզի անունով: Հյուրանոցի համբավը ավելացել է 1899-ին նոր մասնաշենքի կառուցումով եւ շուտով դարձել է ամենահեղինակավորը տարածաշրջանում: Այնտեղ են հյուրընկալվել արքայական ընտանիքների պատվիրակությունները: Հյուրանոցն ունեցել է էլեկտրականության եւ ջրի մատակարարման սեփական աղբյուրները:

1931-ին եղբայրները սնանկացել են, «Ռեֆլզ» հյուրանոցը անցել է դատական կատարածուի ձեռքը, սակայն շուտով վերագտել է իր «սոցիալական դիրքը» սեփականատերերի եւ աշխատակազմի հայ անդամների ջանքերով:

Գրական գործերում եւ ճանապարհորդների հուշագրություններում բազմիցս մեջբերված հյուրանոցը, որը 1987-ին հռչակվել է «ազգային հուշարձան» եւ հիմնական վերանորոգումից հետո վերաբացվել 1991-ին, «այսօր շարունակում է դասվել աշխարհի խոշորագույն հյուրանոցների շարքում»՝ ըստ Ռայթի:

## Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

1835-ին կառուցված հայկական առաքելական Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ամենահին քրիստոնեական եկեղեցին է Սինգապուրում եւ տարածաշրջանում գործող երկու եկեղեցիներից մեկը: Մյուսը Սբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին է Ռանգունում՝ Բիրմայի Հանրապետությունում, գործում է 1862-ից:

Սբ Գրիգոր Լուսավորիչը կառուցվել է 1830-ականներին Սինգապուրում ապրող 10 հայ ընտանիքների ջանքերով, որոնց նյութապես օժանդակել են Հնդկաստանում եւ Ճավայում ապրող մեծահարուստ հայերը: Ռայթի նկարագրությամբ եկեղեցին արտաքնապես հայկական տեսք չունի, բայց ներքին ձեւավորումն ու զարդանախշերը վկայում են հին ավանդական հայկական ճարտարապետության մասին: Եկեղեցին համարվում է երկրի տեսարժան վայրերից մեկը: Այնտեղ ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում եկեղեցական արարողություններ, ծիսակատարություններ, հարսանիքներ եւ մշակութային հանդիսություններ: 2011-ի մարտին նշվելու է եկեղեցու կառուցման 175-րդ տարեդարձը:

## «Սթրեյթս թայմս» թերթը եւ Քաջիկ Մովսեսյանը

Սինգապուրի ամենաշատ կարդացվող թերթը «Սթրեյթս թայմսն» է, որի կայքը նշում է, որ տարածաշրջանում անգլերեն լեզվով հրատարակվող ամենահին օրաթերթն է, սակայն չի նշում, որ թերթի հիմնադիրը 1845 թվին եղել է հայկական համայնքի երեւելի անդամներից՝ առեւտրական Քաջիկ Մովսեսը (Մովսեսյան): Տպագրական սարքավորումները Անգլիայից պատվիրում է նրա ընկերը՝ Մարտիրոս Աբգարը, բայց վերջինիս ընկերության (Աբգար եւ ընկերություն) խորտակումից հետո Քաջիկն իր ընկերոջ օգնությամբ է հասնում եւ տեր կանգնելով տպարանին՝ Ռոբերտս Վուդսին նշանակում թերթի խմբագիր: Մի տարի անց, սակայն, նկատելով, որ ֆինանսական տեսակետից շահութաբեր չէ, նա թերթը վաճառում է Ռոբերտս Վուդսին:

«Պատմական գաղտնիքները բացահայտելը եւ նորանոր տեղեկություններ հայտնաբերելը չափազանց հետաքրքրական եւ հրապուրիչ է: Իսկ ընթերցողներից, որոնք մինչ այդ անծանոթ էին Սինգապուրում ապրող հայերի պատմությանը, նամակներ ստանալը՝ հաճելի: Նրանցից ոմանք իրենց ընտանիքների պատմությունն են հայտնաբերել իմ գրքում», տեղեկացնում է Ռայթը, որը 44 հայ ընտանիքների հետ է գործակցել իր հետազոտությունները ավարտին հասցնելու համար:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

*(1) Ըստ Հայկական սովետական հանրագիտարանի (հատոր 10, էջ 389), «Հայերը Սինգապուրում հաստատվել են 18-րդ դ. վերջին: Եկել են հիմնականում Հնդկաստանից եւ Մալակկայից: Մալակկայից եկած հայերի թիվն այնքան մեծ էր, որ .... բնակված փողոցները կոչվել են Հայկական, Սարգսյան, Մարտիրոսյան: Համայնքի ներքին կյանքը կարգավորել է ազգ. ժողովը, որն ամեն տարի ընտրել է վարչություն: Լույս է տեսել «Ուսումնասեր» կիսամյա պարբերականը: 19-րդ դ. կեսին հիմնվել է երկու տպարան՝ «Արփի» եւ «Մասիս»: 1917-ին հիմնվել է ՀԲԸՄ-ի մասնաճյուղը»:*

# Ժպտա՞լ, թե՞ ոչ

Փորձեք ժպտալ այսօր ու մտածել, որ տունը ձերն է: Եթե անգամ որեւէ մեկը չհիշեց ձեզ, չզանգեց ու չշնորհավորեց, եթե անգամ հիվանդ կամ վիրավորված եք, անգամ եթե «գազի» ու «լույսի» տեսուչն առանց զգուշացնելու զրկում է տունդ ջերմությունից, հոգ չէ, որ թոշակառու ես, մենակ ես ու թոշակդ էլ ուշացրել են: Ժպտա, նույնիսկ եթե ամուսինդ դրսի անհաջողության մաղձը գլխիդ թափի:

Մի նեղսրտիր դիմացի շքեղ առանձնատան ներսը աչք գցելիս, կամ շքեղ մեքենաների մեջ նստած ու շքեղ հարդարված տիկիններին նայելիս եւ կամ շքեղ ռեստորաններում երեկոն անհոգությամբ մսխողներից: Մոռացիր նրանց, ովքեր կյանքդ դարձնում են ավելի քան անտանելի, դատարկ ու աղքատ, կեղեքում օրդ ու ապրուստդ: Մոռացիր գործատուիդ, հովանավորիդ, սիրեցյալիդ, եղիր ինքդ քեզ հետ, մի օր ապրիր ինքդ քո համար. հանգստացիր պարզապես: Անհնա՞ր է: Որովհետեւ անտարբերությունն է շուրջդ ու տունդ՝ դատարկ, որովհետեւ առավոտից մինչ ուշ երեկո կուչ ես գալիս ապրանքաբեռ դարակների կողքին՝ գնորդ մուրալով, որովհետեւ ջահելությանդ վրա անպատկառ հայացքներ են սողում... Որովհետեւ ամբողջ օրը 20 մոմ չես վաճառել տնետուն ման գալով ու դատարկաձեռն հետ ես դառնում տունդ, որովհետեւ ներսի ու դրսի հոգսը քո խեղճ ու փխրուն ուսերին է ընկած:

(Ոչ վաղ անցյալում հայ ընտանիքի ու հայ կնոջ ավանդապահության ու պարկեշտության գովքն էին անում հայ պոետներն ու արվեստագետները: Առասպելը ի՜նչ արագ ցնդեց: Բավական էր ազատության քամու շունչը, ու դրա բերանն ընկած բեկբեկուն տերեւի պես թռավ մեր կանանց համբավը՝ մեզ համար խորթ, անսովոր մենթալիտետով: Թվեր ու փաստեր՝ որքան ասես: Բավական է միայն հիշենք ռուսական սայթերից մեկում հայտնված վենագիրը. «Հայ մարմնավաճառները Թուրքիայի գլխացավանքն են դարձել» (գոնե մեկ այլ երկիր ընտրեին): Սոցիալական կարիքից ծնված իրավիճակ, որը, սակայն, որոշ դեպքերում բարգավաճ բիզնեսի է վերածվել՝ հովանավորյալ կասկածելի ստվերներով):

Մոռանանք նրանց, ովքեր ներկա հարաբերությունների մեջ ապրում են «խիղճները գրպանը դրած», ում մեջ խորն է նստած միջնադարյան տղամարդու գենը, ով մոռացել է կյանքի բնական օրենքը, ով ապրում է «ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր» սկզբունքով եւ վերջապես մեզ շրջապատող ամենատարածված եւ արագ բազմացող տիպին մոռանանք՝ կեղեքիչին եւ ուրիշի աշխատանքը հանգիստ յուրացնողին: Մոռանալով հանդերձ՝ խորհուրդ տանք (մեծահարուստ մեր խավին ու բարձրաստիճան չինովնիկին) կարդալու (կամ վերընթերցելու) Դիկենսի «Սուրբ ծննդյան տոների պատմությունը» կամ դիտելու համանուն ֆիլմը, հաստատ կլասիկ ժլատի ու կեղեքիչի այդ կերպարի փոփոխությունը իրենց մտածողության մեջ մի հետք կթողնի, սեփական բարեկեցության բուրգի բարձունքից այլոց տեսնելու «շնորհ» կիջնի վրաները:

Թերըմբռնված ազատություն ու բարոյականություն, թերսնված կյանք, որ զրկեց մարդկանց արժանապատվությունից, իրավունքներից ու... ժպիտից:

Հասարակական տրանսպորտի միջոցներից ինձ ամենահարմարը մետրոն է: Ամեն երեկո, արդեն տասը տարի ուշ ժամերին տուն եմ դառնում մետրոյով, նայեք հայ մարդկանց եւ կանանց դեմքերին: Ի՜նչ խեղճություն, աչքերի կորսված փայլ, մռայլ անորոշություն, չկա լուսավոր որեւէ դեմք, ժպիտ: «Տխուր ենք ապրում, պարոնայք», կասեր Անտոն Պավլովիչը: Ժպիտ չկա՛ մեր դեմքին, հարգարժան ղեկավար այրեր: Ձեր ժողովրդի մայրերը հոգնած են ու սպառված: Ինչ փույթ, որ վերականգնեցիք նախկին տոնը խորհրդային կանանց՝ հեղափոխականի հիմնած, չնայած մայրության ու գեղեցկության տոն արդեն ընդունել էիք: Դեռ միամսյակ էլ եք հայտարարել՝ գլխացավանքի միամսյակ: Իրականում, ոչ մի տոն չկա:

Փոխարենը այնպես արեք, որ Երեւանի վրա կուպրի նման ծանրացած երկինքը նոսրանա. թե չէ ամենուրեք բողոք ու բողոք է բարձրանում վեր: Որ կանայք քաղաքի փողոցներից (ոչ միայն մեր) տուն դառնան, ապրեն ավելի հանգիստ, չմոռանան, որ կին են, որ հմայքն իրենց պահեն ավելի երկար, եւ իրենց տներում կարողանան ջերմություն ստեղծել: Եվ որ ժպտան:

Բայց միեւնույն է, ի հեճուկս նրանց եւ կպչուն այս հոգսի, ժպտացեք այսօր ու՝ անկեղծ: Ժպտացեք, որ... նրանք փոքր-ինչ թոթափեն իրենց հոգու բեռը:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Լեհաստանը ցանկանում է «արեւելյան գործընկերներին» տեսնել Եվրոմիության ռազմական առաքելություններում

Այս տարվա հուլիսի 1-ից Հունգարիան Եվրոմիությունում նախագահությունը կհանձնի Լեհաստանին: Այս կապակցությամբ բավական ուշագրավ հայտարարությամբ է հանդես եկել Լեհաստանի պաշտպանության նախարար Բոգդան Կլիխը, որի խոսքերը մեջբերում ենք ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ից: Ընդգծելով, որ ԵՄ-ում նախագահության ստանձնելուց հետո Վարշավայի համար առաջնահերթ ուղղություններ են լինելու ԵՄ բյուջեի ընդունումը, «Արեւելյան գործընկերություն» նախաձեռնության ակտիվ գործակցությունը եւ Եվրոպայի էներգետիկ անվտանգության ամրապնդումը», Կլիխը նշել է. «Լեհաստանը ցանկանում է, որ «Արեւելյան գործընկերության» ծրագրի մեջ ընդգրկված երկրներն ակտիվորեն ընդգրկվեն Եվրոմիության ռազմական առաքելություններում: Առայժմ միայն Ուկրաինան է ստորագրել համապատասխան համաձայնագիր, կրկնեմ` մենք ուզում ենք, որ Կիեւի օրինակին հետեւեն մեր մյուս «արեւելյան գործընկերները եւս»: Կլիխը նաեւ հորդորել է ամրապնդել ԵՄ-ի առանձին ռազմական խմբավորումները` «դարձնելով դրանք արագ արձագանքման հինգհազարանոց խմբավորումներ, որոնք կմտնեն ճգնաժամային տարածքներ»: Վերջում լեհ պաշտոնյան ընդգծել է, որ Լեհաստանը ԵՄ-ում նախագահության տարում ամեն ինչ կանի` ընդլայնելու ԵՄ-ՆԱՏՕ գործակցությունները. «Չնայած այս երկու կառույցների համագործակցությունն այսօր ավելի լավ է, քան մի քանի տարի առաջ, սակայն, մեր գնահատականով, դրանք անբավարար են: Անհրաժեշտ է իրավականորեն հստակեցնել այդ գործակցությունը` հասկապես այնպիսի «ռազմական թատերաբեմերում», ինչպիսին են, օրինակ, Կոսովոն կամ Աֆղանստանը», նշել է Լեհաստանի պաշտպանության նախարարը:

Հիշեցնենք, որ ԵՄ «Արեւելյան գործակցության» անդամ են Ուկրաինան, Վրաստանը, Մոլդովան, Բելառուսը, Ադրբեջանը եւ Հայաստանը: Բելառուսն ու Հայաստանը արդեն իսկ ունեն «արագ արձագանքման ուժեր», եւ դրանք գործադրելու պարտավորություններ` ՀԱՊԿ շրջանակներում:

**Հ. Ա.**

# Էրդողանը մինչեւ հունիսյան ընտրություններ փորձում է լռեցնել մամուլը լրագրողների ձերբակալությամբ

Թուրքիայում ներկայիս կառավարության հեղաշրջում կազմակերպելու մեղադրանքով երեկ ձերբակալվել են չորս լրագրող եւ 1 գրող: Ըստ թուրքական «Զաման» պարբերականի, ձերբակալվածներին մեղադրանք է առաջադրվել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կառավարության տապալման կազմակերպման մեջ, թեեւ թուրքական ընդդիմությունը պնդում է, որ այս գործողությունները կապ ունեն նրանց լրագրողական գործունեության հետ եւ հիմնականում ուղղված են «Էրգենեքոնի» գործում Էրդողանի ընդդիմախոսներից ազատվելուն:

Մարտի 6-ին Թուրքիայում արդեն իսկ ձերբակալվել էին երկու հայտնի լրագրողներ` Նեդիմ Շեները, որ Հրանտ Դինքի սպանության մանրամասներ բացահայտող գրքի հեղինակն է, Ահմեթ Շըքը, որ «Էրգենեքոնի» մասին պատմող գրքի հեղինակն է:

Մեկնաբանությունները, թե ձերբակալություններն իրականացվում են Թուրքիայում մամուլի ազատությունը սահմանափակելու եւ ճնշելու նպատակով, տեղին չի համարել Թուրքիայի ներքին գործերի նախարար Բաշըր Աթալայը: Նրա խոսքերին ի պաշտպանություն է հանդես եկել նաեւ «Էրգենեքոնի» գործով հիմնական մեղադրող Ջեքերիյա Ուզը, նշելով, թե այդ ձերբակալությունները ուղղակի իրավական գործողություններ են, ընդ որում, մեղադրանքները կապ չունեն ձերբակալվածների լրագրողական գործունեության հետ, «այլ հիմնված են ապացույցների վրա»: Թե ի՞նչ ապացույցների մասին է խոսքը, հիմնական մեղադրողը չի պարզաբանել` հղում անելով ներկա փուլում այդ ամենը գաղտնի պահելու անհրաժեշտությանը:

Եվրոմիությունը, Միացյալ Նահանգները, ինչպես նաեւ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները ահազանգել են Թուրքիայում լրագրողների ձերբակալությունների եւ խոսքի ազատության սահմանափակումների առնչությամբ: Ու չնայած թուրք մեղադրողի պնդումներին, թուրքական որոշ կայքէջեր մեջ են բերում լրագրողներից ոմանց ներկայացված մեղադրանքներում եղած նյութեր, որոնք հաստատապես չեն վկայում «ապացույցների հիման վրա» ձերբակալություններ իրականացնելու օգտին: Մասնավորապես, ձերբակալված լրագրողներից մեկի` Շեների պարագայում «ապացույցներից» մեկն էլ ինչ-որ անանուն հաղորդագրությունն է, թե Շեները կապ է ունեցել «էրգենեքոնի» հրազեկման բաժնի հետ:

**Ա. Հ.**

# Գեյթսը Քաբուլում ներողություն խնդրեց Կարզայից զոհված 9 երեխաների համար



ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը անսպասելիորեն ժամանել է Քաբուլ: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ օդանավակայանում նրան դիմավորել է ամերիկյան ցամաքային զորքերի գեներալ Դեւիդ Պետրեուսը, որը Աֆղանստանում կոալիցիոն ուժերի հրամանատարն է:

Ֆրանսպրեսը նշում է, որ Գեյթսի այցը տեղի է ունենում ԱՄՆ-Աֆղանստան լարված հարաբերությունների պայմաններում: Անցյալ շաբաթ Կունարի նահանգում ՆԱՏՕ-ի օդուժը սխալ հաշվարկի պատճառով թիրախ էր դարձրել ոչ թե թալիբ գրոհայիններին, այլ մի խումբ երեխաների: Զոհվել էր 9 երեխա: Երեկ Քաբուլում տեղի են ունեցել բողոքի բազմամարդ ցույցեր:

Նման լարված պայմաններում երեկ տեղի է ունեցել Ռոբերտ Գեյթսի հանդիպումը Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայի հետ: Նախօրեին Կարզայը հայտարարել էր, որ ինքը անբավարար է համարում խաղաղ բնակիչների սպանությունների համար ամերիկացիների հրապարակային զղջումը: Կարզայի խոսքերով, հենց խաղաղ բնակիչների սպանություններն են ԱՄՆ-Աֆղանստան հարաբերությունների ներկայիս լարվածության պատճառը: Այս կապակցությամբ Ռոբերտ Գեյթսը երեկ Կարզայից անձամբ ներողություն է խնդրել կոալիցիոն ուժերի սխալների հետեւանքով խաղաղ բնակիչների զոհվելու համար: Հանդիպման ժամանակ խոսվել է նաեւ Աֆղանստանից ամերիկյան զորքերի դուրսբերման ծրագրերի մասին:

Աֆղանստանի նախագահի գործերի վարչության մամլո ծառայության տվյալներով, միայն 2011-ի փետրվարի 18-ից մինչեւ մարտի 1-ը երկրում զոհվել է 74 խաղաղ բնակիչ, այդ թվում` 40 երեխա:

Այցի ընթացքում Գեյթսը հանդիպում է ունեցել նաեւ Աֆղանստանի արեւելքում եւ հարավում տեղաբաշխված ամերիկացի զինծառայողների հետ, խորհրդակցություն անցկացրել գեներալ Դեւիդ Պետրեուսի հետ: Նախատեսված է Աֆղանստանից ամերիկյան զորքերի դուրսբերումը սկսել 2011-ի հուլիսին, իսկ 2014-ին բոլոր լիազորությունները փոխանցել երկրի կառավարությանը: Պենտագոնն առայժմ պաշտոնապես չի հայտարարել, թե ամերիկացի քանի զինծառայող կհեռանա Աֆղանստանից: Ներկայումս այնտեղ կա 97 հազար ամերիկացի զինվոր:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԻԲԻԱՅՈՒՄ

# Բ. Օբաման սաուդցիներին խնդրել է զինել լիբիացի ապստամբներին

## «Քադդաֆին պատրաստ է հեռանալ երաշխիքների դիմաց»



**Բրիտանական The Independent թերթի տվյալներով, ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը Սաուդյան Արաբիային խնդրել է կազմակերպել զենքի առաքումը լիբիացի ապստամբներին: Սաուդցիները դեռ չեն արձագանքել ԱՄՆ-ի խնդրանքին:**

**Պատահական չէ, որ Օբաման դիմել է հենց Աբդուլլահ թագավորին: Վերջինս ատում է Քադդաֆիին, քանի որ լիբիացի ղեկավարը ծրագրել էր սպանել նրան: Բացի դրանից, սաուդցիները քանիցս օժանդակել են ամերիկացիների ռազմական գործողություններին:**

**Լիբիացի ապստամբներին ներկայում պաշտպանական զինատեսակներ են հարկավոր կառավարական զորքերի հարձակումները հետ մղելու համար: Խոսքը հակատանկային, հակաօդային զենքերի եւ ականանետների մասին է: Ընդդիմության ռազմական հաջողությունները վերջ կդնեին Լիբիայում թռիչքների համար արգելված գոտի ստեղծելու պահանջներին, որոնք Վաշինգտոնն առայժմ չի ուզում կատարել (չկա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձեւ):**

**Լոնդոնում արաբերեն լույս տեսնող «Աշ Շարք ալ Աուսաթ» թերթն իր հերթին պնդում է, որ Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆին ծանրութեթեւ է անում հեռանալու հնարավորությունը եւ դիմել է ապստամբներին, ասելով, թե պատրաստ է տարագրվել իր ընտանիքի ապահովության երաշխիքների դիմաց: Ապստամբներն առայժմ չեն պատասխանել այդ առաջարկությանը:**

**BBC-ն հաղորդում է Լիբիայի արեւելքում` Միսրատա քաղաքում շարունակվող մարտերի մասին, որտեղ Քադդաֆիին հավատարիմ օդուժի ռմբակոծությունների հետեւանքով կան բազմաթիվ զոհեր եւ վիրավորներ: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը պահանջել է դադարեցնել խաղաղ բնակիչների սպանությունները: Իրավիճակի գնահատման նպատակով Լիբիա են գործուղվել ՄԱԿ-ի մի խումբ փորձագետներ: Լիբիայում Բան Կի Մունի հատուկ դեսպանորդ է նշանակվել Հորդանանի նախկին արտգործնախարար Աբդելիլահ ալ Խաթիբը:**

# Պետդեպարտամենտի մրցանակ Ռոզա Օթունբաեւային



**Ղրղզստանի ժամանակավոր նախագահ Ռոզա Օթունբաեւան արժանացել է ԱՄՆ պետդեպարտամենտի «Քաջության համար» մրցանակի: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:**

**Պետությունների ղեկավարների մեջ Օթունբաեւան այդ մրցանակին արժանացած առաջին կինն է: Մարտի 8-ին Վաշինգտոնում մրցանակը նրան կհանձնի ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Մարտի 6-ին Օթունբաեւան արդեն ԱՄՆ-ում էր, որտեղ հանդիպել է պետական եւ հասարակական մի շարք գործիչների հետ:**

**«Քաջության համար» մրցանակով սովորաբար նշվում են ականավոր կանանց նվաճումները: Անցյալում այն շնորհվել է հիմնականում կին իրավապաշտպաններին:**

**Այսպես կոչված «Վարդակակաչների հեղափոխության» շնորհիվ Օթունբաեւան փոխարինեց տապալված նախագահ Կուրմանբեկ Բակիեւին: 2010-ի ապրիլին նա դարձավ ժամանակավոր կառավարության ղեկավար, ապա երկրի նախագահ նշանակվեց մինչեւ 2011-ի վերջը:**

# Ճապոնացի նախարարը հրաժարական տվեց օտարերկրացու նվիրատվության պատճառով



**Ճապոնիայի արտգործնախարար Սեյձի Մաեհարան հրաժարական է տվել, այդ մասին հայտարարելով մամլո ասուլիսում: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ պաշտոնաթողության պատճառը նրա քաղաքական աջակցության ֆոնդում օտարերկրացու նվիրատվության փաստն է: Ճապոնիայի օրենսդրությունը քաղաքական ֆոնդերին արգելում է նվիրատվություն ստանալ օտարերկրացիներից, նույնիսկ եթե նրանք ծնվել են Ճապոնիայի տարածքում:**

**Արտգործնախարարը խոստովանել է, որ վերջին տարիներին իր ֆոնդը 250 հազար իեն (3 հազար դոլար) է ստացել 72-ամյա մի կորեուհուց, որը կյանքի մեծ մասն անցկացրել է Ճապոնիայում, բայց այդ երկրի քաղաքացի չէ: Մաեհարայի խոսքերով, իրենք մանկության ընկերներ են:**

**Սեյձի Մաեհարան կես տարի զբաղեցրել է արտգործնախարարի պաշտոնը եւ համարվում էր վարչապետ Նաոտո Կանի առավել հավանական իրավահաջորդը:**

**Նախարարի հրաժարականի հայտարարությունից հետո Կանը նրան խնդրել է չթողնել պաշտոնը, բայց Մաեհարան չի փոխել իր որոշումը: Նա երկրի քաղաքացիներից ներողություն է խնդրել եւ ափսոսանք է արտահայտել սխալ գործելու համար:**

**Կիոդո գործակալությունը հաղորդում է, որ մարտի 7-ին Նաոտո Կանը ընդունել է հրաժարականը եւ արտգործնախարարի պաշտոնակատար է նշանակել Յուկիո Էդանոյին, որը կառավարության գլխավոր քարտուղարն է:**

# Խարիզմատիկ հայ արքայազնը

*ՍԹԻՎԵՆ ՈՒԵՍԹ, «Բլումբերգ նյուզ»*

Երբ պարող Դավիթ Կարապետյանը մուտք է գործում «Սան Ֆրանցիսկո բալետի» բեմադրած «Մարդուկ-Ջարդուկը» բեմադրության մեջ, նա հազիվ է կարողանում ինչ-որ բան տեսնել: Նրա մկանուտ ուսերին դրոշմանկարված պլաստմասսայից պատրաստված ութ ֆունտ քաշով գլուխ է, հանգույցներ եւ կեղծ մուշտակ՝ մետաղալարերի հենքով:

- Աստված իմ, դա այնքան ծանր է ու խոշոր,- ծիծաղելով ասում է Կարապետյանը:-Տեսանելիությունը շատ քիչ է: Հազիվ է աչքդ մի բան ջոկում:

Կարապետյանն այդ ջարդող ատամներով, կոնաձեւ զինվորական գլխարկով եւ հրակարմիր մորուքով դիմակը կրում է առաջին գործողության մեջ, որ պատկերում է Մարդուկ-Ջարդուկ արքայազնի ղեկավարությամբ խաղալիք զինվորների ճակատամարտը մկների բանակի դեմ, որոնց առաջնորդում է դաժան Մուկ արքան:

- Երկու բանակներն էլ կազմված են երեխա պարողներից,- բացատրում է Կարապետյանը:- Լիքը լույսեր կան եւ լիքը երեխաներ, որոնք մի ծայրից մյուսն են վազում: Միեւնույն ժամանակ ձեռքիդ այս սուրն է, եւ երբ սկսում ես կռվել, պետք է զգույշ լինես: Դու չես ուզում որեւէ մեկի վնասել:

Կարապետյանն իրեն շատ ավելի է դրսեւորում, երբ պարում է Շաքարի փերու հետ (որին մարմնավորում է կյանքում իր ընկերուհին՝ Վանեսա Զահորիանը) եւ երկրորդ գործողության նրբագեղ պա-դե-դեն՝ Մարիա Կոչետկովայի հետ միասին:

Բեմադրությունը, որ իրականացրել է պարախմբի գեղարվեստական տնօրեն Հելգի Թոմասոնը, առաջին անգամ ցուցադրվել է 2004-ին: Այնտեղ ներկայացված է ավելի քան 170 շքեղ հագուստ, որ ձեւավորել են Մարթին Պակլեդինասը եւ Մայքլ Յիրգանի երեւակայական միջավայրը, այն սկսվում է խաղալիքների խանութից եւ Սան Ֆրանցիսկոյի վիկտորիական տան հյուրասենյակից, որը երկրորդ գործողության մեջ վերածվում է



երազային տեղանքի՝ իսպանական, չինական եւ ռուսական պարերով հանդերձ:

29-ամյա Դավիթ Կարապետյանը «Սան Ֆրանցիսկոյի բալետին» միացել է 2004-ին՝ գալով «Ցյուրիխ բալետ» խմբից: Մեծացած լինելով Երեւանում (Հայաստան)՝ նա մտադիր չի եղել պարող դառնալ: Առանց բեմական հագուստների նա նման է քոլեջի աշակերտի՝ կապույտ ջինսով, մոխրագույն սվիտրով եւ մարզական կոշիկներով:

- Երբ պատանի էի, չէի սիրում բալետը,- ասում է Կարապետյանը:- Իմ ողջ ընտանիքը պրոֆեսիոնալ պարողներ են՝ հայրս, մայրս, քույրս, որն իր սեփական պարի դպրոցն ունի Հայաստանում: Նրանք սկսել են բալետից, բայց հետո փոխարինել են հայ ժողովրդական պարերով, քանի որ կարող էին ճանապարհորդել եւ լավ պարադիր ունեին: Այնպես որ ես զբաղվում էի սպորտով՝ մարտարվեստ, լող, ջրացատկ, ամեն բան: Բախտս բերել էր: Ես շատ ակտիվ տղա էի:

Նրա ծնողները փորձեցին պարի հանդեպ հետաքրքրություն առաջացնել, երբ Դավիթը 12 տարեկան էր:

- Նրանք ինձ եւս մեկ անգամ ասացին, որ գնամ դպրոց եւ ժողովրդական պար սովորեմ: Դա ինձ դուր եկավ: Հետո սկսեցի գնալ բալետի դասարանի պարապմունքներին ու տեսա, որ տղաները կատարում են այդ բոլոր զարմանալի թռիչքներն ու պիրուետները: Սկսեցի փորձել անել, ինչ որ այդ տղաներն էին անում:

Բալետին անցնելն «ամենադժվար բանն էր, որ ես երբեւէ արել եմ», վերհիշում է Դավիթը: «Երկու տարի անց ես մրցույթի գնացի Սանկտ Պետերբուրգ, ոչ մի տեղ չգրավեցի, բայց դա բացեց աչքերս: Ես վերադարձա որպես մեկ ուրիշ անձնավորություն: Սկսեցի ավելի շատ աշխատել եւ գլխավոր դերեր ստանալ»:

16 տարեկանում նա մեկնում է Ցյուրիխի բալետի դպրոց սովորելու, որտեղ մեկ տարի անց միանում է պրոֆեսիոնալ բալետի խմբին: Շվեյցարիայում վեց տարի անցկացնելուց հետո Դավիթը պատրաստ էր նոր մարտահրավերներ առաջարկող երկացանկի: 2004-ին նա չորս օրով ուղեւորվեց Սան Ֆրանցիսկո:

- Ինձ տեսավ Հելգին, որը մեկ տարվա պայմանագիր առաջարկեց 2005 թվականի համար,- ասում է Դավիթը:

Սան Ֆրանցիսկոյում, «Մարդուկ-Ջարդուկի» Արքայազնից բացի Կարապետյանը կատարել է այնպիսի գլխավոր դերեր, ինչպիսիք են «Կարապի լճի» արքայազն Զիգֆրիդը եւ «Քնած գեղեցկուհու» արքայազն Դեզիրեն (երկուսն էլ՝ Թոմասոնի բեմադրությամբ): Դավիթը ճանաչում է ստացել նաեւ այնպիսի մոդեռն բալետներով, ինչպիսիք են Բալանչինի «Դիվերտիսմենտ թիվ 15»-ը եւ Ջերոմ Ռոբինսի «Նավաստիներն ափին»-ը:

- Սան Ֆրանցիսկոն մեծ փոփոխություն էր,- ասում է Դավիթը:- Ես փորձեր էի անում վերոհիշյալ հինգ բալետներում՝ աշխատելով տարբեր պարընկերների հետ: Շատ դժվար էր առաջին մի քանի շաբաթներին նրանց մերվելը:

Ամերիկա գալուց հետո նա հաճախել է լուսանկարչության եւ ապա՝ դերասանական դասընթացների: Հանգստանալու համար Կարապետյանը մեկնում է մոտակա Նապա Վալի շրջանը՝ լիցքաթափվելու:

- Սա իմ ամենասիրած վայրն է,- ասում է նա,- քանի որ ինձ Եվրոպան է հիշեցնում, եւ ինձ դուր է գալիս այստեղի գինին:

**Անգլերենից թարգմանեց**
**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ**

**Թարգմանչի հետգրություն.** **Չայկովսկու «Շչելկունչիկ» բալետի անունը հայերենում գրեթե միշտ նույնն է մնացել: Սակայն նկատի առնելով, որ այն եվրոպական լեզուներով թարգմանվել է (անգլերեն Nutcracker, ֆրանսերեն Casse-noisettes, իսպաներեն El Cascanueces, իտալերեն Lo schiaccianoci եւ գերմաներեն Nucknacker), մենք եւս առաջարկում ենք այսուհետ բալետի վերնագիրը թարգմանել: Միայն ոչ թե «Ընկույզկոտրիչը», ինչպես եվրոպական լեզուներում, այլ արդեն հայ թարգմանական գրականություն մուտք գործած «Մարդուկ-Ջարդուկ» անունով, որը, կարծում ենք, բավական հաջող է: Կարելի էր թարգմանել նաեւ «Չրխկիկը», որը թե՛ ռուսերեն - չրխկալ բայի իմաստն է արտահայտում եւ թե՛ նվազական ձեւով հուշում է, որ խոսքը ոչ թե խոհանոցային գործիքի, այլ խաղալիքի մասին է: Խորհրդահայ մամուլում մեզ մի անգամ հանդիպել է բավական անհաջող «Ճրթանը» ձեւը (տես՝ «Սովետական արվեստ», 1984, թ. 7, էջ 45), իսկ մեր նախորդ աշխատություններից մեկում օգտագործել էինք «Չրխկանը» տարբերակը (տես մեր «Հայերը համաշխարհային կինոյում» գիրքը, էջ 216, 218): «Մարդուկ-Ջարդուկ» վերնագիրը բալետի համար արդեն սկսել է օգտագործվել (տես Հասմիկ Մարկոսյան, Ռուզաննա Եսայան, Երաժշտության աշխարհում. բալետ, Երեւան, 2007, էջ 73): (Ի դեպ, կարծում ենք, որ նույն կերպ ճիշտ կլիներ ռուսական մուլտֆիլմի հերոս Չեբուրաշկայի անունը թարգմանել Թռմփիկ. շատերը չգիտեն էլ, որ այդ անունը ծագում է ռուսերեն ՝ թռմփալ բայից):**

# Աննա Կասեան

*Նոր աստղ մը աշխարհի բեմերուն վրայ*



2004 թուականէն սկսեալ եւրոպական բեմերուն վրայ օպերայի մարզէն ներս ինքզինք պարտադրած անուն է երգչուհի Աննա Կասեանը (սոպրանօ):

Այսօր Աննա Կասեան աշխարհահռչակ երգչուհի մըն է, որ յաղթական ելոյթներ ունեցած է եւ կունենայ Մ. Նահանգներէն Եւրոպա եւ հարաւային Ափրիկէ:

Աննա Կասեան ծնած է Վրաստան, 1981-ին: Դուստրն է նշանաւոր դուդուկահար Յովհաննէս Կասեանի: Փոքր տարիքէն կը նուագէր ջութակ եւ դաշնամուր: 1999-ը թուականին կ՚ամբողջացնէ ջութակի դասընթացքները՝ Թիֆլիսի պետական երաժշտանոցին մէջ, ուրկէ Փարիզ կ՚անցնի՝ շարունակելու իր երգեցողական ուսումը:

Փարիզի մէջ իր ձայնային մարզումները կը սկսի Ֆրանս-զուիցերիացի աշխարհահռչակ դաշնակահար եւ դիրիժէօր Ալֆրէտ Կորտոյի (Alfred Cortot) անուան երաժշտանոցին մէջ, զոր կ՚աւարտէ գերազանց գնահատանքով:

Կարճ ժամանակի ընթացքին, յարատեւ տքնաջան աշխատանքով, Աննա Կասեանի անունը կը սկսի հանրածանօթ դառնալ եւրոպական երգաշխարհին:

Իր զատորոշուող երգեցողական կորովը եւ ձայնային ուժգնութիւնը կը գնահատուի բարձրօրէն: Յաջորդաբար մրցանակներու կ՚արժանանայ սկսելով Ֆրանսայի Marmand քաղաքի, ապա Bziers քաղաքի քնարերգական երգեցողութեան առաջին կարգի մրցանակներով, Գերմանիոյ Միւնխէն քաղաքի համաշխարհային երգեցողական ARDի մրցանքով, որուն կը յաջորդէ հարաւային Ափրիկէի համաշխարհային երաժշտութեան մրցանքի յաղթանակը, ապա Սան Մարինոյի՝ Ռենատա Թեբալդիի անուան մրցանակի պարգեւատրումը:

Մինչեւ օրս Աննա Կասեան ելոյթներ ունեցած է Զիւրիխի, Բազըլի, Մադրիդի, Վարշավայի, Թուլուզի, Մոնպելիէի, Փարիզի բեմերուն վրայ, ինչպէս նաեւ 2007-ին՝ Նիւ Եորքի Carnegie Hall դահլիճին մէջ:

Իր վերջին պարգեւատրումը եղաւ 2008-ին Բրիւքսելի մէջ Էլիզաբէթ թագուհիի առաջին մրցանակով:

2006 թուականին Ա. Կասեան՝ Սպանիոյ Պամպլոնա քաղաքի՝ Julien Gayarre սպանացի նշանաւոր երգիչ-տենորի անուան համաշխարհային մրցանքին մասնակցելով՝ առաջին մրցանակը կը ստանայ: Այդ օրուան ժիւրին կը նախագահէր աշխարհահռչակ սպանացի մեցցօ-սոպրանօ Teresa Berganza-ն: Ան մեծապէս տպաւորուելով Կասեանի երգեցողական արուեստէն՝ տեղւոյն վրայ իր անունով յատուկ պարգեւ-մրցանակ մը կը հիմնէ եւ բոլոր հանդիսականներուն առջեւ զայն կը նուիրէ Աննա Կասեանին հետեւեալ գնահատական խօսքերով.

«Ինծի համար յայտնութիւն մըն է Աննա Կասեանի շատ գեղեցիկ ձայնը: Ան հրեշտակի նման կ՚երգէ: Իր երգեցողական հոյակապ եւ գերազանց ոճը, ինչպէս նաեւ ազնուական քնքուշ ձայնը եւ բուռն զգացական ներհայեցողական խոր մեկնաբանութիւնը, անմոռանալի են»:

Վկայութիւնները լաւ են, օգտակար եւ կարեւոր հասարակութեան համար, որոշակի կարծիք կազմելու արուեստագէտին մասին, սակայն անձնապէս ունկնդրելը եւ ըմբոշխնելը՝ բոլորովին տարբեր զգացումներ եւ տարբեր ապրումներ կ՚արթնցնէ անհատին մէջ:

Լսեցէք Ռոսսինիի «Սեւիլեան սափրիչ» օպերայէն «Una voce poco fa» քնարական արիայի կատարումը: Հոն կը զգաք տաղանդին՝ առանց ճիգի խաղաղ, հանդարտ արտահոսումը, թէ ինքը՝ որքան վստահ, որքան պարզ եւ որքան տիրական է իր դերին մէջ:

Սփիւռքահայութեան՝ ազգային գիտակցութեան խղճի պարտականութիւնն է բարոյապէս քաջալերել ու գնահատել իր աշխատանքը եւ տաղանդը, որպէսզի մեր զօրակցութիւնը եւ արժանաւոր գնահատանքը մղիչ ոյժ դառնան Աննա Կասեանի եւ անոր նմաններուն համար, որոնք բազմաթիւ զոհողութիւններով՝ ջանասիրութեամբ եւ անհատնում աշխատանքով կրցած են հասնիլ բարձր դիրքերու, որպէսզի իրենք նաեւ իրենց կարգին պատրաստեն երիտասարդ՝ նոր շնորհալի տաղանդներ, որոնք կրնան անոնց արժանաւոր յաջորդները դառնալ, հայ ժողովուրդին նուիրելով փառք ու պատիւ քաղաքակրթուած աշխարհին մէջ:

Դրուատիք մը չենք կատարեր, այլ առարկայականօրէն հայ երգչուհի մը կը ներկայացնենք հայ հասարակութեան, որուն երգեցողութիւնը ըմբոշխնելով պիտի հաստատէք Աննա Կասեանի տաղանդին վաւերականութիւնը:

Այս մրցանակներով եւ հանդիսաւոր ելոյթներու դափնիներով Աննա Կասեան օրերս մուտք կը գործէ յունական գեղարուեստական աշխարհէն ներս, մաս կազմելով «Օնասիս» անուան մշակոյթի՝ գեղարուեստի նորակերտ դահլիճի մէջ կազմակերպուած երգահանդէսին՝ յաջորդական 3 օրերու ընթացքին:

**ԶԱՒԷՆ Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ**
**Աթէնք**



# Այսօր կմեկնարկի Բրիտանական ֆիլմերի փառատոնը




Այսօր՝ ժամը 16.00-ին, Մոսկվա կինոթատրոնում տեղի կունենա Բրիտանական ֆիլմերի ամենամյա փառատոնի բացման արարողությունը: Բացման խոսքով հանդես կգան Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Չարլզ Լոնսդեյլը, Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Արեւիկ Սարիբեկյանը եւ BMI ավիաընկերության բիզնես վաճառքի ղեկավար Սիմոն Ավագյանը: Փառատոնի բացման արարողության հատուկ հյուրն է VO.X բրիտփոփ խումբը:

**Ի. Պ.**

# Էլինա Դանիելյանը բավարարվեց 2-րդ տեղով



Քաթարի մայրաքաղաք Դոհայում վերջնագիծը հատեց շախմատի կանանց Գրան պրիի խաղարկությունը: Մրցաշարի հաղթողին պետք է անվաներ ավարտական տուրը: Վերջին տուրից առաջ Էլինա Դանիելյանը կես միավորով գերազանցում էր Համպի Կոներուին եւ Մարի Սեբագին:

Դանիելյանը, որ մեկնարկից գլխավորում էր աղյուսակը, 11-րդ տուրում արագորեն հաշտություն կնքեց աշխարհի նախկին չեմպիոնուհի Անտուանետա Ստեֆանովայի հետ եւ վաստակեց 8 միավոր: Իսկ ահա Համպի Կոներուն շատ կարեւոր հաղթանակ տոնեց Չժու Չենի նկատմամբ եւ միավորներով հավասարվեց Դանիելյանին: Մարի Սեբագը չկարողացավ ընկերակցել առաջատարներին՝ պարտվելով Բատույագ Մոնգոնտուլին: Լիլիթ Մկրտչյանը ոչ-ոքի խաղաց Մարթա Ֆիեռոյի հետ: Հաշտություն կնքեցին նաեւ Չիբուրդանիձեն ու Ձագնիձեն, իսկ Սյու Յուհուան հաղթեց Պիա Կրամլինգին:

Այսպիսով, Էլինա Դանիելյանն ու Համպի Կոներուն վաստակեցին 8-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով հնդիկ շախմատիստուհին, որ մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ուներ (2607), գրավեց առաջին տեղը: Դա հնարավորություն ընձեռեց Կոներուին Գրան պրիի խաղարկության ընդհանուր արդյունքներով վաստակած 398,3 միավորով զբաղեցնել 2-րդ տեղը: Քանի որ առաջին տեղում աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանն է (410 միավոր), ուստի Կոներուն իրավունք ստացավ տարեվերջին վիճարկելու աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը: Նրան հաջողվեց առաջ անցնել իր գլխավոր հակառակորդ Նանա Ձագնիձեից, որն ընդհանուր հաշվարկով գրավեց 3-րդ տեղը (390 միավոր): Էլինայի համար Գրան պրիի խաղարկության 6-րդ փուլն ամենահաջողն էր: Նա ընդհանուր հաշվարկով զբաղեցրեց 5-րդ հորիզոնականը (358,3 միավոր):

Դոհայում 7 միավորով 3-րդ տեղը զբաղեցրեց Մարի Սեբագը, որին հաջորդում են Պիա Կրամլինգը, Մայա Չիբուրդանիձեն ու Նանա Ձագնիձեն (5,5-ական միավոր): 5-ական միավորով հաջորդ տեղերը գրավեցին Սյու Յուհուան եւ Բատույագ Մոնգոնտուլը: Իր հնարավորություններից ցածր հանդես եկավ Լիլիթ Մկրտչյանը, որը 4,5 միավորով զբաղեցրեց 9-րդ հորիզոնականը: Լիլիթը տարավ 2 հաղթանակ, 5 պարտիա ավարտեց ոչ-ոքի, 4-ում պարտվեց: Նա առաջ անցավ միայն Մարթա Ֆիեռոյից (4,5 միավոր), Անտուանետա Ստեֆանովայից (4) եւ Չժու Չենից (3,5):

# Միայն «Փյունիկը» մեկնարկեց հաղթանակով



Երեք հանդիպումներով տրվեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի հոբելյանական՝ 20-րդ առաջնության մեկնարկը: Անդրանիկ հանդիպումները վկայեցին, որ առաջնությունում անհաշտ պայքար է ընթանալու եւ թիմերին գոլերն ու հաղթանակները հեշտությամբ չեն տրվելու:

Մեկնարկային տուրում խփվեց ընդամենը 3 գոլ: Ընդ որում, «Միկայի» եւ «Շիրակի» մրցավեճում ֆուտբոլասերները, այդ թվում նաեւ ակումբի ջանքերով Գյումրիից ժամանած երկրպագուներն այդպես էլ գոլի ականատես չեղան: «Շիրակը» բավական հմտորեն էր պաշտպանվում ու վտանգավոր հակագրոհում էր: Դրանցից մեկի ժամանակ շիրակցի Անդրանիկ Բարիկյանը մեն մենակ դուրս եկավ Կասպարովի դիմաց, սակայն վերջինս հիանալի խաղաց՝ հետ մղելով հարվածը:

«Շիրակի» նորեկ դարպասապահ Իգոր Լոգվինովն էլ իրեն հիանալի դրսեւորեց այդ խաղում: Առաջին խաղակեսում նա թիմին փրկեց վերահաս գոլերից, երբ դարպասին վտանգավոր հարվածներ կատարեցին Պեդրո Լոպեսն ու Հրայր Մկոյանը: Իսկ 69-րդ րոպեին Լոգվինովը գերազանց ռեակցիա դրսեւորեց՝ հետ մղելով Նարեկ Բեգլարյանի 11 մ հարվածը: «Շիրակը» 11 մ հարվածով պատժվել էր, երբ Գեւորգ Հովհաննիսյանը կոպիտ էր խաղացել Նարեկ Բեգլարյանի նկատմամբ: Շիրակցին 2-րդ դեղին քարտը ստացավ ու լքեց խաղադաշտը: Թեեւ թվային գերակշռությանը, «Միկային» չհաջողվեց գտնել մրցակցի դարպասի բանալին: «Միկան», որ նախորդ 4 առաջնություններում հաղթանակով էր մեկնարկել, այս անգամ բավարարվեց ոչ ոքի արդյունքով:

«Միկայի» գլխավոր մարզիչ Արմեն Շահգելդյանը գոհ էր խաղի որակից, բայց ոչ արդյունքից: «Շիրակի» մարզիչ Ֆելիքս Խոջոյանը (Սամվել Պետրոսյանը մարզչական արտոնագիր չունենալու պատճառով պաշտոնապես ակումբում ձեւակերպված է որպես ադմինիստրատոր եւ իրավունք չուներ մասնակցելու հետխաղյա ասուլիսին) նշեց, որ շատ ծանր խաղ ստացվեց ու թեեւ եկել էին հաղթելու, բայց ոչ ոքին էլ վատ արդյունք չէ հյուրընկալվելիս:

Շատերը սպասում էին, որ «Բանանցն» Արարատի «Այգ» մարզադաշտում կհաղթի «Արարատին», որն այդպես էլ ուսումնամարզական հավաք չանցկացրեց: Սակայն թիմը կրկին գլխավորած Արկադի Անդրեասյանի սաները, որոնց թվում քիչ չէին երիտասարդ, անփորձ ֆուտբոլիստները, կարողացան լրջորեն մրցակցել Հայաստանի փոխչեմպիոնի հետ: Թեեւ խաղն անցավ «Բանանցի» զգալի առավելությամբ, սակայն Ստեւիցա Կուզմանովսկու սաներին չհաջողվեց հաղթել: Իսկ դրա նախադրյալները կային:

Արդեն 3-րդ րոպեին «Բանանցը» 11 մ հարվածի իրավունք ստացավ: Սակայն Արթուր Ոսկանյանը չկարողացավ հաղթող դուրս գալ Ալեքսանդր Պետուխովի հետ մենամարտում, որը հետ մղեց գնդակը: Հետագայում էլ «Բանանցի» ֆուտբոլիստները ձեռքից բաց թողեցին գոլ խփելու մի քանի լավ հնարավորություններ: Վերջապես 85-րդ րոպեին քիչ առաջ փոխարինման դուրս եկած Նորայր Գյոզալյանը բացեց հաշիվը: Բայց «Բանանցին» վիճակված չէր հաղթել: 3 րոպե անց արարատցիները 11 մ հարվածի իրավունք ստացան ու Արա Հովհաննիսյանը հստակ իրացնելով, «Արարատին» փրկեց պարտությունից:

Մեկնարկային տուրից հետո առաջնության առաջատարի դերը ստանձնեց երկրի չեմպիոն «Փյունիկը», որը հաջորդ օրը Արարատում կայացած խաղում 1-0 հաշվով հաղթեց «Իմպուլսին»: «Փյունիկը» խաղային եւ տարածքային առավելություն ուներ, սակայն միայն մեկ անգամ գրավեց մրցակցի դարպասը: Առաջին խաղակեսի ավարտին հաղթական գոլի հեղինակ դարձավ «Փյունիկի» երիտասարդ պաշտպան Վարազդատ Հարոյանը, որը Մարկոսի փոխանցումից հետո գլխի հարվածով գրավեց մրցակցի դարպասը:

«Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանն ընդհանուր առմամբ գոհ էր իր սաների ցուցադրած խաղից՝ հաշվի առնելով դաշտի որակը, մեկնարկային խաղի լարվածությունը: Նա տեղեկացրեց, որ շուտով Երեւան է ժամանելու սերբ դարպասապահ, որը կփորձարկվի:

# Դոները լավագույն եռյակում

Ֆեռնանդո Մոնտիելի նկատմամբ հաղթանակ տոնելուց հետո ֆիլիպինցի բռնցքամարտիկ Նոնիտո Դոներն ամերիկյան The Ring ամսագրի վարկածով անկախ քաշային կարգից աշխարհի ուժեղագույն պրոֆեսիոնալ բռնցքամարտիկների դասակարգման ցուցակում 5-րդ հորիզոնականից տեղափոխվեց 3-րդ տեղ՝ շրջանցելով արգենտինացի Սերխիո Մարտինեսին եւ մեքսիկացի Խուան Մանուել Մարկեսին: Իսկ 7-րդ տեղում ընթացող Ֆեռնանդո Մոնտիելը պարտությունից հետո դուրս մնաց լավագույն տասնյակից:

Դասակարգման ցուցակը գլխավորում է ֆիլիպինցի Մենի Պակյաոն: 2-րդ տեղում Ֆլոյդ Մեյվեզերն է, որը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է՝ շահելով բոլոր 41 մենամարտերը: Լավագույն տասնյակում 6-10-րդ տեղերում են թաիլանդցի Վոնջոնգկամ Պոնգսակլեկը, ուկրաինացի Վլադիմիր Կլիչկոն, ամերիկացի Բրեդլի Տիմոտին, պուերտոռիկացի Խուան Մանուել Լոպեսն ու մեքսիկացի Սեգուրա Ջովանին:

# Հաջողության հիմքը դրեց Նալբանդյանը



Դավիթ Նալբանդյանն Արգենտինայի հավաքականի կազմում հաջող հանդես եկավ Դեւիսի գավաթի 1/8 եզրափակիչում: Ռումինացիների հետ խաղում Նալբանդյանն առաջինը կորտ դուրս եկավ՝ հաղթելով Ադրիան Ունգուրին (6-3, 6-2, 5-7, 6-4):

Մյուս 3 մրցախաղերում եւս արգենտինացի թենիսիստներն արդեն առանց Նալբանդյանի հաղթեցին մրցակիցներին: 5-րդ մրցախաղը չանցկացվեց: Այսպիսով, 4-0 հաշվով հաղթելով Ռումինիայի հավաքականին, արգենտինացիները մտան քառորդ եզրափակիչ, որտեղ կմրցեն ղազախների հետ: Վերջիններս համառ պայքարում 3-2 հաշվով առավելության հասան չեխերի նկատմամբ:

Պայքարից դուրս մնացին ռուս թենիսիստները՝ 2-3 հաշվով զիջելով շվեդներին: Նրանց մրցակիցը հաջորդ փուլում Սերբիայի հավաքականն է, որը 4-1 հաշվով հաղթեց հնդիկներին:

Քառորդ եզրափակիչի մյուս 2 զույգերը կազմել են Իսպանիան ու ԱՄՆ-ը, Ֆրանսիան ու Գերմանիան: Իսպանացիները 4-1 հաշվով առավելության հասան բելգիացիների նկատմամբ: Նույնպիսի արդյունք գրանցվեց ԱՄՆ-Չիլի մրցախաղում: Իսկ ահա Գերմանիայի եւ Ֆրանսիայի հավաքականները միեւնույն 3-2 հաշվով պարտության մատնեցին համապատասխանաբար Խորվաթիայի ու Ավստրիայի թենիսիստներին:

Առաջիկայում թենիսիստներին սպասում են Ինդիան Ուելսում եւ Մայամիում կայանալիք «Masters» կարգի մրցաշարերը: Վնասվածքի պատճառով Նալբանդյանը չի մասնակցի այդ մրցաշարերին:

# Ֆուտբոլի ՀՀ կանանց հավաքականն առաջատարն է

Ֆուտբոլի Հայաստանի կանանց հավաքականը շարունակում է հաջող ելույթները Մալթայում ընթացող Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի նախնական փուլում: Մեկնարկում Ֆարերներին 1-0 հաշվով հաղթելուց հետո մեր հավաքականը գոլազուրկ ոչ-ոքի ավարտեց Վրաստանի աղջիկների հետ հանդիպումը: Տուրի մյուս խաղում Ֆարերների հավաքականը 2-0 հաշվով հաղթեց Մալթայի ընտրանուն:

Այսօր կայանալիք վերջին տուրից առաջ ընտրական մրցաշարի աղյուսակը 4 միավորով գլխավորում է Հայաստանի հավաքականը: 3-ական միավոր ունեն Ֆարերների ու Մալթայի հավաքականները, իսկ աղյուսակը եզրափակում է Վրաստանի ընտրանին (1 միավոր):

Հաջորդ փուլի միակ ուղեգրի տերը հայտնի կդառնա այսօր կայանալիք Հայաստան-Մալթա, Վրաստան-Ֆարերներ մրցախաղերից հետո:

# Մովսիսյանը նպաստեց «Կրասնոդարի» հաղթանակին

Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը վերջապես իր նորամուտը նշեց Կրասնոդարի համանուն թիմի կազմում: Պերմում կայացած ֆուտբոլի ՌԴ գավաթի 1/8 եզրափակիչ խաղի 73-րդ րոպեին փոխարինման դուրս գալով, Յուրա Մովսիսյանը նպաստեց «Ամկարի» նկատմամբ հաղթանակ տոնելուն: Ավելացված ժամանակում Մովսիսյանն աջ թեւում ձերբազատվելով հսկողությունից, առաջ սլացավ ու գնդակը հասցեագրեց տուգանային հրապարակում գտնվող Պիկուշչակին, որն էլ խփեց հանդիպման միակ գոլը: Հաղթելով 1-0 հաշվով, «Կրասնոդարը» մտավ քառորդ եզրափակիչ, որտեղ կմրցի Մոսկվայի «Սպարտակի» հետ:

# Մնաց մեկ տուր

Իրանում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը: Վերջին տուրից առաջ միանգամից 5 շախմատիստներ՝ Սերգեյ Տիվյակովը, Եվգենի Գլեյզերովը, Նիջաթ Մամեդովը, Ռուստամ Կասիմջանովն ու Մերաբ Գագունաշվիլին 8-ական միավորով գլխավորում են աղյուսակը:

Մինչ այդ աղյուսակը գլխավորող Սերգեյ Տիվյակովը վերջին 3 պարտիաներն էլ ավարտեց ոչ ոքի՝ հաշտություն կնքելով Ալեքսեյ Ֆյոդորովի, Ռուստամ Կասիմջանովի եւ Նիջաթ Մամեդովի հետ:

7 միավորով 20-րդ տեղում է Տիգրան Քոթանջյանը: Վերջին 3 տուրերում նա հաջող խաղաց՝ վաստակելով 2 միավոր: 8-րդ տուրում հայ շախմատիստը հաղթեց իրանցի Ամիր Կովսարինիային, իսկ նախավերջին տուրում պարտության մատնեց մեկ այլ իրանցու՝ Մազդակ Բախթիարիին: 9-րդ տուրում Տիգրանը պարտվեց իրանցի Մոշեն Շարբաֆին:

# Մեկնարկեց Սինոփսիս Արմենիայի ֆուտզալի մրցաշարը

**Մեկնարկել է Սինոփսիս Արմենիա ընկերության ֆուտզալի ավանդական դարձած 5-րդ մրցաշարը, որի հանդիպումներն անցկացվում են «Gross» մարզահամալիրում: 2007-ից անցկացվող այս մրցաշարում տարեցտարի աճում է մասնակիցների քանակը: Եթե անդրանիկ մրցաշարին մասնակցել էին 16 թիմեր, ապա այս անգամ մեկնարկի են դուրս եկել ընկերության 28 թիմեր: Այս տարի մասնակիցների թվում են նաեւ հեռահաղորդակցության եւ լրատվական ընկերությունների տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ստորաբաժանումների թիմերը: Մրցաշարի գլխավոր նպատակն է աշխատակիցների շրջանում խթանել ակտիվ եւ առողջ ապրելակերպը:**

**Մրցաշարը կտեւի շուրջ 2 ամիս, որի ընթացքում կկայանա 100 խաղ: Նախնական փուլում թիմերը բաժանվել են 4 ենթախմբի, որոնցում լավագույն արդյունքի հասած 4 ակումբները կշարունակեն պայքարը գլխավոր մրցանակի համար:**

# «Զենիթը» ՌԴ սուպերգավաթակիր

**Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» նվաճեց Ռուսաստանի ֆուտբոլի սուպերգավաթը՝ Կրասնոդարում կայացած խաղում 1-0 հաշվով հաղթելով Մոսկվայի ԲԿՄԱ ին: Հանդիպման ելքը վճռեց 73-րդ րոպեին Իոնովի խփած միակ գնդակը: «Զենիթի» գլխավոր մարզիչ Լուչանո Սպալետին թիմի հետ 3-րդ տիտղոսը նվաճեց: 2010-ին «Զենիթը» նրա գլխավորությամբ նվաճել էր երկրի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսները: Իսկ «Զենիթը» 2-րդ անգամ վերջին 3 տարիների ընթացքում դարձավ ՌԴ սուպերգավաթակիր:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ





**Հաշվետվություն «Գիտանք Ա» հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին**

«Գիտանք Ա» գիտակրթական եւ մշակութային հիմնադրամ: Պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ 03 Ա 073206, 20.11.2006թ: Գտնվելու վայրը՝ Երեւան, Մաշտոցի 36, բն. 14, հեռ. 530629: Հիմնադրամի տնօրեն՝ Ալեքսանդր Աղաբեկյան: Հոգաբարձուների խորհուրդ՝ Կարինե Աղաբեկյան, Տիգրան Աղաբեկյան, Աննա Պետրոսյան: Աշխատակազմ չկա: Հրատարակվել է 5 անուն գիրք: Ֆինանսավորման աղբյուր՝ գրքերի վաճառքից ստացված հասույթ՝ 1108 հազար դրամ: Օգտագործված միջոցներ՝ 826 հազար դրամ: Կանոնադրական նպատակներին ուղղված ծախսեր՝ 826 հազար դրամ:

***Հիմնադրամի տնօրեն՝ Ա. Աղաբեկյան***

Հաստատվել է հոգաբարձուների խորհրդի կողմից 02.03.2011 թ.

# Ցավակցություն

Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակազմը իր խոր վիշտն է հայտնում Մատենադարանի երկարամյա, վաստակաշատ գիտաշխատող

**Հայկ Ամալյանի**

մահվան առթիվ եւ ցավակցում է նրա ընտանիքի անդամներին ու հարազատներին:


International Finance Corporation
World Bank Group

www.energyexpo.am
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԷՔՍՊՈ 2011

Համաշխարհային բանկի խմբի անդամ IFC-ն հրավիրում է Ձեզ այցելելու ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԷՔՍՊՈ 2011 ցուցահանդեսին, որը տեղի կունենա 2011 թ. մարտի 10-12-ը, «Մոսկվայի տուն Երեւանում» ՄՄԳԿ-ում:
Հասցե՝ Երեւան, Արգիշտի 7
Ցուցահանդեսի ընթացքում կներկայացվեն արդի էներգաարդյունավետ սարքավորումներն ու տեխնոլոգիաները, ներառյալ՝
✓ ջերմամեկուսիչ նյութեր,
✓ ջեռուցման եւ օդափոխության սարքավորումներ,
✓ էներգախնայող լուսային համակարգեր,
✓ էներգառեսուրսների օգտագործման ավտոմատ համակարգեր և այլն:

Կազմակերպիչ՝
Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային Ֆինանսական Կորպորացիա (IFC)
Նախագիծը ներկայացնում է՝
"Էքսպոմեդիա" ցուցահանդեսների նախագծման կենտրոնը
Հասցե՝ 0001, Երեւան, Աբովյան 16
Հեռ/ Ֆաքս՝ (+374 10) 563 899 569 244
Բջջ. (+374 93) 777 052 777 053
mail: energyexpo11@gmail.com


# Սանձել սեփական կամքը

Հնչում է սարսափելի, բայց հավանաբար ինչ-որ տեղ այդպես է. հիմա, ինչպես ասում են, գիրք չեն կարդում: Եվ միաժամանակ հավելում են. «Մանավանդ երիտասարդությունը»: Իրոք սարսափելի է հնչում: Ճիշտ է, կա մի ինչ-որ ոչ այն է մխիթարություն, ոչ այն է արդարացում, իբր՝ հիմա, եթե պետք է, կսեղմես կոճակը, համակարգչի համապատասխան ստեղնը, կմտնես ինտերնետ, եւ կարդա՝ ինչքան սիրտդ կուզի: Սո՞ւտ է այդ ամենը: Եթե չասենք՝ ինքնախաբեություն: Չէ՞ որ դեռ մի հարց էլ պետք է տալ. «Իսկ այդ ի՞նչ է սիրտն ուզում»: Ասենք, եթե ինչ-որ մեկին պետք է կարդալ անկրկնելի «Գոմեշը» կամ անկրկնելի «Երեք հրացանակիրները», ապա ինչո՞ւ ձեռքը չառնի գիրքը, տվյալ դեպքում Մաթեւոսյանի կամ Դյումայի: Ծայրահեղ դեպքում չէ՞ որ դա շատ ավելի անվտանգ է: Կարդա ինչքան կուզես: Իսկ եթե երկար ժամանակով համակարգիչ մտնես, դեռ հայտնի չէ, թե ինչ հիվանդություններ կվաստակես: Դա ես չեմ ասում: Ասում են բազմաթիվ հետազոտությունները: Մի խոսքով, խնդիրը կա եւ այն պետք է լուծել: Ցանկանում ենք, թե ոչ: Իսկ առայժմ աչք ենք փակում այն փաստի վրա, որ հենց երիտասարդությունն է, համակարգչի առջեւ նստելով, անմիջապես գերության տրվում արգելված պտղի համին եւ սուր բովանդակության գռեհկաբանության ձգողականությանը, մղձավանջին եւ անբարոյականության գովերգմանը: Ճիշտ է, ես ցանկություն էլ չունեմ այլ ծայրահեղության մեջ ընկնելով, փնովել կամ մերժել ինտերնետն ընդհանրապես:

Այնպես որ, եթե ես խորհուրդ տամ անպայման կարդալ «Կամովին նավաբեկյալ» գիրքը, ապա դժվար թե ինչ-որ մեկն իսկույն մտնի որոնման ցուցիչ՝ ինտերնետում գտնելու Ալեն Բոմբարի գիրքը: Դա անլուրջ բան է: Կծկված նստել համակարգչի առջեւ եւ ժամերով, օրերով ընթերցել հարյուրավոր էջերից բաղկացած գիրքը: Բայց ա՛յ թե ինչն է հոգուս ցավ պատճառում. գրո՞ղը տանի, չէ՞ որ իրոք չի կարելի չկարդալ «Կամովին նավաբեկյալը»: Ալեն Բոմբարն, իհարկե, ոչ Սերվանտես է, եւ ոչ էլ Տոլստոյ, եւ ընդհանրապես, խոսքը գրքի գրական արժանիքների մասին չէ: Խոսքն այն սխրանքի մասին է, որ հեղինակը գործել է հանուն շատ ու շատ մարդկանց փրկության: Ահա թե ինչու ժամանակ առ ժամանակ, գտնվելով նավարկության դժվարին պայմաններում, ես փորձում եմ ժամանակ գտնել ծանոթացնելու որոշ ընթերցողների, առանձնապես երիտասարդությանը այն մարդկանց հետ, որոնք իրենք իրենց հաղթելով են ստիպում մեզ , որ հավատանք ինքներս մեզ:

Եթե մոտավորապես 1951 թվականին Ալեն Բոմբարին ասեին, թե ինքն ընդգրկվելու է աշխարհի հարյուր մեծ ծովագնացների ամենապատվավոր ցանկում, ապա կարծում եմ, նա ոչ միայն կզարմանար, այլեւ ձեռքերը կտարածեր, ընդգծելով իր տարակուսանքը: Չէ՞ որ նա երբեք չէր երազել ծովային դառնալու մասին, նույնիսկ լողալ չգիտեր: Ո՛չ արյան մեջ, ո՛չ հոգում չուներ ռոմանտիկի Աստծո կայծը: Այսպես ասած՝ ընդհանուր պրոֆիլի համեստ բժիշկ էր ֆրանսիական Բուլոն նավահանգստի հոսպիտալում: Իր մասնագիտական գործունեության ընթացքում ուշադրություն էր դարձրել, որ ցավալիորեն մեծ թվով ծովայիններ են զոհվում տարբեր նավաբեկությունների ժամանակ ոչ թե վնասվածքներից, սովից, ցրտից, այլ վախից, անկամությունից, հուսալքությունից: «Իրենք իրենց հավատալու փոխարեն հավատում էին կործանման անխուսափելիությանը: Մտածեց եւ մտորեց խնդրի շուրջ, որպես բժիշկ լավ իմանալով, որ շատ ավելի աստվածահաճո գործ է դժբախտությունը կանխելը: Եվ որոշեց դիմել խելահեղ փորձարարության:

Դա 1952 թվականի դեկտեմբերի 23-ին էր: Ալենը քսանութ տարեկան էր: Նախօրեին ֆրանսիական «Նոտր-դամ-դե-Պեյրագ» ձկնորսանավը ջախջախվել էր, եւ նավաստիների մեծամասնությունը զոհվել էր: Դե, ի՞նչ կա որ, կհարցնի ընթերցողը, չէ՞ որ միշտ էլ մարդիկ են զոհվում նավաբեկությունների ժամանակ, որոնք վերջիվերջո, որպես կանոն, տեղի են ունենում փոթորկին: Դրա համար էլ զոհվել են: Բանն այն է, որ այս դեպքում կատարվածը տարբերվում էր: Զոհվել էին քառասուներեք նավաստիներ: Բոմբարի ուշադրությունը գրավել էր այն, որ նրանք բոլորն էլ փրկարարական ժիլետներով էին: Փոթորիկ չկար: Նավը բախվել էր քարերին: Եվ բժիշկը չէր կասկածում, որ շատերը զոհվել էին խուճապից եւ սեփական անձի հանդեպ հավատի բացակայությունից: Եվ ահա որոշեց կամովին նավաբեկյալ դառնալ:

Պարզվեց, որ ամեն տարի աշխարհում մինչեւ հիսուն հազար մարդ է զոհվում ծովում եւ նրանց մոտ իննսուն տոկոսը՝ առաջին երեք օրում: Հենց այստեղ բժիշկ Բոմբարը սկսեց որոնել այն հարցի պատասխանը, թե ինչու է դա տեղի ունենում: Իրոք, չէ՞ որ երեք օրում մարդիկ չեն մահանում քաղցից եւ ծարավից, նաեւ փոթորիկ չկար, փրկարարական ժիլետներ էլ ունեին: Պետք էր գտնել պատասխանը: Առաջ անցնելով ասեմ, որ արդեն բուն գրքում նա զոհված ծովայիններին դիմեց հետեւյալ բառերով. «Կյանքից վաղաժամ հեռացած, լեգենդար նավաբեկությունների զոհեր. ես գիտե՛մ, ձեզ ծովը չսպանեց, ձեզ քաղցը չսպանեց, ձեզ ծարավը չսպանեց: Ճոճվելով ալիքների վրա, ճայերի խղճալի ճիչերի տակ, դուք մահացաք վախից...»:



Որպես բժիշկ ուսումնասիրելով խիստ ծայրահեղ իրավիճակներում հայտնված մարդկանց վարքագիծը, Բոմբարը սահմանեց, որ մարդը կարող է զոհվել ավելի վաղ, քան նրան կլքեն ֆիզիկական ուժերը, քանզի չի հավատում ո՛չ իրեն, ո՛չ իր ուժերին: Ես անձամբ դեպքեր գիտեմ, երբ սառցակալած տունդրայում, որտեղ ջերմաստիճանը իջնում էր մինչեւ մինուս վաթսուն, մարդիկ, փոխանակ իրենց տիրապետելու, հուսահատությունից դեն էին նետում իրենց վրայից տաք հագուստը: Մի խոսքով, խնդիրը, որ իր առջեւ դրեց Բոմբարը, ոչ այնքան բժշկական էր, որքան մարդասիրական: Նա որոշեց ծովային երկարատեւ նավարկության մեկնել, ինչպես ասում են՝ հին տաշտակով, մարդկանց համոզելու համար, որ կարելի է հաղթել ինքն իրեն: Նման դեպքերում ես կրկնում եմ մեծ Նժդեհի խոսքերը. «Առաջին հերթին հաղթել սեփական պարտությանը»: Մի՛ վախեցեք ողջ կյանքում կրկնել այս բառերը: Դրանք պետք են ոչ միայն մեզանից յուրաքանչյուրին, այլեւ մեր ժողովրդին:

Չեմ թվարկի արդեն, թե ինչպիսի հաջողությունների հասավ բժիշկ Բոմբարը: Պարզապես խորհուրդ կտամ անպայման կարդալ նրա գիրքը: Եվ սակայն կասեմ ամենագլխավորի մասին: Իր «տաշտակում» չունենալով ոչ մի գրամ խմելու ջուր, ոչ մի գրամ հաց, նա դրեյֆեց Միջերկրական ծովի ափերից մինչեւ Բարբադոս կղզի, ինչպես արդեն ասել եմ, սկսած 1952 թվականի դեկտեմբերի 23-ից, 65 օր շարունակ: «Արմենիա»-ն, սկսած Ատլանտիկայի սկզբից մինչեւ վերջը անցել է այդ ուղիով (իհարկե, պատահականության բերումով), եւ մենք հաճախ ենք հիշել իմ ֆրանսիացի գործընկերոջը, որն իր ճշմարիտ սխրանքով փրկել եւ ամեն տարի փրկում է մոլորակի հազարավոր ու հազարավոր մարդկանց: Մեզ մոտ «Կիլիկիա»-ում եւ հիմա էլ «Արմենիա»-ում ու ողջ աշխարհում յուրաքանչյուր նավի վրա պարտադիր կարգով տեղադրված են եւ կտեղադրվեն բոմբարյան լաստիկներ, որոնք նավաբեկության դեպքում փրկում են մեր ժամանակակիցներին:

Ահա Բոմբարի խորհուրդներից միայն մեկը: Եթե դուք բաց օվկիանոսում կամ ծովում հայտնվեք լաստով եւ չունենաք խմելու ջուր, ապա կարող եք ձուկ բռնել կամ ջրիմուռներ գտնել, երկար ժամանակ ծամել դրանք եւ թքել: Դրանց, առանձնապես ձկան մեջ ջուրը քաղցրահամ է: Ալեն Բոմբարն իր փորձը կատարեց բավական երիտասարդ՝ ընդամենը 28 տարեկան հասակում:

Բայց կա եւ մի այլ ծովագնաց, որն իր ողջ «ծովային ստեղծագործությամբ» մարդկանց ապացուցեց, որ տարիքը չի խանգարում մարդու դժվար ծրագրերի իրագործմանը: Ընդհանրապես կյանքում, եւ ոչ թե պարտադիր՝ օվկիանոսում: Պատահական չէ, որ այդ մարդն իր լաստերն ու նավակներն այդպես էլ կոչել է. «Տարիքը նշանակություն չունի»: Իմ ռեպորտաժներում ընթերցողներն այդ անունը բազմիցս տեսել են: Դա Վիլյամ Վիլլիսն է: Իր ողջ կյանքում այդ անգլիացի առագաստանավորդը ֆանտաստիկական անցումներ է կատարել օվկիանոսով հիմնականում նրա համար, որ մարդկանց ապացուցի՝ նույնիսկ երկար տարիներ անց մարդը շատ ավելին է ընդունակ, քան իրեն թվում է:

Երբ ողջ աշխարհը հիացմունքով խոսում էր, նույնիսկ շատ տարիներ անց, «Կոն-Թիկի» լաստով լեգենդար Թուր Հեյերդալի եւ նրա թիմի վեց համախոհ-անդամների Պերուից մինչեւ Պոլինեզյան կղզիներ կատարած նավարկության մասին, ապա վաթսունմեկամյա Վիլլիսը վերցրեց ու կառուցեց իր լաստը, բալսայի ծառաբների քանակից ելնելով այն անվանելով «Յոթ քույրիկներ» եւ հեյերդալյան ուղին անցավ միայնակ: Ճիշտ է, նա այնքան էլ միայնակ չէր: Նրա հետ էին կատուն եւ թութակը: Սակայն Վիլյամ Վիլլիսի համար դա քիչ էր: Յոթանասուն տարեկանում (նա ծնվել էր 1893 թվականին), այսինքն 1963 թվականին նա կառուցեց ավելի հզոր մի լաստ, այն կոչելով, ինչպես արդեն ասել եմ, «Տարիքը չի խանգարում» եւ երկուսուկես անգամ գերազանցեց Հեյերդալի դրեյֆի տարածության ռեկորդը, լաստի վրա գտնվելով երկու հարյուր հինգ օր: Վիլյամ Վիլլիսի հաջողությամբ ամենից շատ ուրախացավ ինքը՝ Թուր Հեյերդալը: Քանզի Վիլլիսը միայն ապացուցեց, որ նորվեգացի գիտնականն ու ճանապարհորդը իրավացի էր:

Իր վերջին առագաստանավը Վիլլիսն անվանեց «Պստլիկ»: Նա յոթանասունհինգ տարեկան էր: Դատելով ըստ ամենայնի, նա լավ գիտեր, որ իր կյանքում վերջին առագաստանավի տերն է դարձել: Որոշեց եւս մեկ անցում կատարել Ատլանտիկայով: Ես ռեպորտաժներից մեկում շարադրել եմ այդ պատմությունը: Ասեմ միայն, որ վերջերս իմացա այդ կենսասեր մարդու կործանման եւս մեկ տարբերակի մասին: Իմանալով իր անբուժելի հիվանդության մասին, Վիլյամ Վիլլիսը ցածրիկ տախտակամածից մի քայլ արեց դեպի օվկիանոս եւ կյանքից հեռացավ ինչպես Ջեկ Լոնդոնի հերոս Մարտին Իդենը: Համենայն դեպս երեք ամիս շարունակ Հյուսիսային Ատլանտիկայի բոլոր լողամիջոցները որոնում էին «Պստլիկ»-ը: Այն գտան 1968 թվականի սեպտեմբերի 20-ին: Նավը որբացած ճոճվում էր օվկիանոսային ալիքների վրա: Անձնագիրը, ակնոցը եւ կողմնացույցը ներսում էին:

Ասում են, երկար ժամանակ Լոնդոնի մի ինչ-որ մարզական ակումբին կից գործում էր Վիլյամ Վիլլիսի անվան «Առողջության խումբը», որտեղ ճերմակահեր տղամարդիկ ու կանայք պայքարում էին ծերության դեմ: Բոլորի վերնաշապիկներին գրված էր «Տարիքը նշանակություն չունի»:

...Մեր նավի ճոճքն ինն օր անընդմեջ չի դադարում: Այստեղ, այս Հարավային կիսագնդի ամենահարավում ամեն ինչ այլ է: Ե՛վ օվկիանոսի ալիքները, ե՛ւ երկնքի աստղերը: Եվ ես արդեն պատմել եմ այդ մասին:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**«Արմենիա» առագաստանավ, Խաղաղ օվկիանոս**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Հակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 7.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: